


3820






3820



ԴՐԱ ԵՐԵՐԵ

ՄԿՐՏՍՈՒԹԻՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ ԱՆԴՎԻԵԲԻ Ա. ԵԶՈՒՄ

Արագուրիամբ եւ յանձնածովով

ՊԱՏ. Կ. Հ. ԱԲՐՅԱՋՆ

— ին —

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԱԿ

ՅՈՎԼԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Միսիսաւ Ամերիկայի Մկրտական Հրատարակիչ ընկերութեան

معارف عموميہ نظارت جلیلستان ف ۲۱ صفر سنہ ۳۰۳ و ۱۶ تشرین
ثانی سنہ ۲۰۱ تاریخی و ۷۸۵ نومرسی رخصتامد سیله طبع اوئشدر

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՐՏԱՍՏԵԱՆ
(ԱՐԱՄԱՆ)

1885

11

3820

ԴՐԱ ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1881 թ.

V

264

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Վ-80

C U S

ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԲԱՆԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ ԱՆԳՋԻԵՐԵՆ ԼԵԶՈՒԱԿ

ՄԵՐԱԳՐՈՒՔԵԱՄՔ ԽԵ յԱԼԵԼՈՒԹԵԱՋՔ

ՊԱՏ. Կ. Հ. ՄԲՀՐՃԵՆ

Եկ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԱԿ

ՅՈՎԵԼԱՆՀԵՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Միջնար Ամերիկայի Մկրտական Հռուտրակիչ ընկերուքեան



Բանու կ. ՊՈՂԻՆ

ՏԱԿԱՐՄՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՐՏԱՍՏԵԱՆ

(Արամեան)

1885



20866

A 1
900

Սիրելի Ընթերցող

Քրիստոնէից փրկութեան վերաբերեալ առաջին
եւ գլխաւոր կէտն է հաւատք ի Տէր Յիսուս Քր-
իստոս։ Տէր մեր ըսաւ իւր Աշակերտաց, երբ
սպատուէր կուտայր նոցա, «Ով որ հաւատայ ու մը-
կրտուի, պիտի փրկուի» (Մարկ. Ժ. 16), եւ Տէր
Յիսուս Քրիստոսի հաւատալն, բոլոր Սուրբ Գրոց
մէջ, առաջին տեղին բռնած է ի մասին յաւիտե-
նական փրկութեան։ «Ով որ կը հաւատայ անոր՝ չը
դատապարտուիր. եւ ով չհաւատար՝ արդէն իսկ
դատապարտուած է, քանզի չհաւատաց Աստուծոյ միա-
ձին Որդւոյն անուանը» (Յով. Դ. 18)։ Հաւատքն է
ընդունիլ զվկայութիւն Աստուծոյ նկատմամբ իւր
Որդւոյն, եւ վստահիլ Տէր Յիսուսի որպէս յայտ-
նուած է ի Սուրբ Գիրս։ Եթէ ի մասին հաւատոյ
սպակասութիւն գտնուի, փրկութեան ամբողջ գործն
կ'անկանի կործան, զի գրուած է, «Ով որ Որդւոյն
կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի. եւ ով որ
Որդւոյն չհնազանդիր՝ կեանք պիտի չտեսնէ, այլ
Աստուծոյ բարկութիւնը կը մնալ անոր վրայ» (Յով.
Դ. 36)։ Արդ՝ նախ քան զընթեռնուլ քո զայս
գրքոյկ որ կը ճառէ զՄկրտութենէ Հաւատացելոց,
կը խնդրեմ զի քննես զանձն քո թէ արդեօք հա-
ւատացեալ ես Յիսուսի թէ ոչ, վասն զի, եթէ չես,

Մկրտութիւնն ըստ եղանակի Սուրբ Դրոց փոխանակ յաջողելց զվրկութիւն քո, պիտի յաւելու յաւէտ զքոյդ դատապարտութիւն։ Եթէ ճշմարտապէս չես հաւատար, ոչինչ օգուտ ունի քեզ թէ իրբեւ երախայ եւ թէ իրբեւ չափահաս մկրտուիլդ։ Թէ սրսկուած լինիս եւ թէ թաղեալ, ոչ ինչ կը շահիս, եթէ ի վախճանի գտնուիս ոչ հաւատացեալ, քանզի պիտի կորտուիս յաւիտեանս։ «Բայց առանց հաւատոյ անհնար է հանոյ ըլլոլ Աստուծոյ» (Երր. ԺԱ. 6), թէեւ մինչեւ իսկ ի գործ դնես զօրէնս Նորա։

Եթէ կարող ես պատասխանել հարցմանն որ հաւատոյդ կը վերաբերի, եւ յայտարարել թէ կ'ապաւինիս արդարեւ Յիսուսի Քրիստոսի, վայել է քեզ յայնժամ ուսանիլ զկամս Նորա եւ ընել զայն իսկոյն։ Դու Յիսուսի աշակերտն ես այժմ հաւատով։ ուսիր ուրեմն զոր ինչ կ'ուսուցանէր վարդապետ քո, եւ, իրբեւ աշակերտ ճշմարիտ, ըրէ խնդութեամբ եւ զգուշութեամբ զոր ինչ կը հրամայէ քեզ։ Թերեւս սովորութիւնն յորում վարժուեցար, չէ համաձայն կամաց Տեառն քո, եւ չարիք է թողուլ զճանապարհ հայրենի առանց իրաւացի պատճառի։ բայց, որովհետեւ ճշմարիտ կրօնն է անձնական ինչ, եւ որովհետեւ անձնական հնազանդութեամբ կապուած ես Յիսուսի, պարտիս փոյթ ունել քննել Խօսքը վասն անձինդ եւ չհետեւիլ ումեք կուրօրէն։ Երբ խնդիրն խղճիդ կը վերաբերի, չես ընդ օրինօք մարդոյ, այլ Քըրիստոսի։ «Ձեր Ուսուցիչը մի է, այսինքն՝ Քրիստոս» (Մատ. ԻՊ. 10), որ կը պահանջէ ամրող-

Հական հնազանդութիւն : «Ով որ հայրը կամ մայրը կը սիրէ աւելի քան զիս , արժանի չէ ինձ» (Մատ . Ժ . 57) , մի վարանիր ուրեմն , այլ հաւատարմութեամբ հնազանդ լեր Աստուածային վարդապետիդ :

Հաւատացելոց Մկրտութիւնն մենէ բազմաց է այն բաներէն մին զոր յոյժ յստակօրէն յայտնած է Սուրբ Գիրք , եւ կը զարմանամք զի ամենայն Քըրիատոնեայ բարեկամք մեր չեն տեսաներ զայն այնպէս որպէս մեք : Այն բացերեւ է առ մեզ այնալէս որպէս է արեգակն յերկինս , առ որ չեմք համարձակիլ փակել զաչս մեր : Բայց եւ այնպէս չեմք մտաներ ի պայքար ընդ նոսա որք չեն կարող տեսանել որ ինչ բացայացա է մեզ , այլ սիրով կ'առնեմք զայն յանդիման առ նոսա , յուսալով թէ ամբողջ եկեղեցին պիտի գայ ընդունել «Մի Տէր . մի հաւատք . մի մկրտուրիւն» (Եփես . Դ . 5) : Իսկ դու , սիրելի ընթերցող , չունիս այնչափ գործ այլոց խորհրդոյն կամ դործողութեանց հետ : Գո գործդ է , լուսաւորեալ դատողութեան կիրառութեամբ , Սուրբ Գիրքը՝ Սուրբ Գրոց հետ բաղդատել , եւ Հոգւոյն առաջնորդութեամբ ջանալ ի ձեռն բերել մի ստոյդ արդիւնք : Աստուածաշունչիդ լուսով խնդիրը քննելու քեզ չկրնար վնասել , բայց դուցէ մեծապէս վնասուիս մերժելով զքննութիւն , զի վնասակար յոյժ են կանխակալ կարծիք :

Մի ինչ կը խնդրեմ ի քէն . ջանա թօթափել յանձնէ զնախալաշարմունս դաստիարակութեան , եւ Սուրբ Գիրք , Սուրբ Գիրք միայն , թողլինի քեզ առաջնորդ այս խնդրոյն մէջ : Ըստած է թէ «Բողոքականաց կրօնն Աստուածաշունչն է միայն :

Ստուգիւ այսպէս պարտի լինել. բայց կ'երկնչիմք թէ իրողութիւնը զայս չհաստատեր, զի են Բողոքականք որք կ'ընեն շատ բաներ զորս չհրամայեր Սուրբ Գիրք։ Սակայն դու հաստատուն կալ զառաջնորդութիւն Սուրբ Գրոց, եւ կրօնական ամէն խնդրոց մէջ ըսէ, «Օրէնքին ու վկայութեանը, երէ այս խօսքին համեմատ չզրուցեն, անոնք ամենեւին լոյս չունին.» (Ես. Հ. 20)։

Երբ ուղիղ քննութեամբ կու գաս այն եղբակացութեան յոր հասած է հեղինակ գործոյս, զգոյշ կաց յայնժամ հսկարտութենէ եւ վէճէ. «Մարդ չկրնար բան մը առնուլ, երէ տրուած չէ անոր յերկնից,» (Յով. Գ. 27). Վասն որոյ ընկալ զճշմարտութիւն խոնարհութեամբ եւ սինդ կալ զայն. բայց կալ զայն երախտագիտական ոգւով առ Տէր որ զայն ուսոյց քեզ։ Հաստատապէս որոշէ կատարել զկամս վարդապետիդ եւ լեր անյողդողդի յայտնել զհոգի նորա։ Մի եւնոյն ատեն աներկիւղ եռանդեամբ տարածէ ճշմարտութիւնը զոր ուսար, զի որ ինչ ականջ ի վար լսեցիր, սկարտիս քարոզել տանեաց վրայ (Մատ. Ժ. 27)։ Մկրտութեան նկատմամբ եղած մոլորութիւնն, օրուան մեծագոյն մոլորութեանց շատերուն յատակին մէջ կը գտնուի։ Ուստի մի գուղնաքեայ ինչ համարիր գիտել զճշմարտութիւն խմասին Մկրտութեան, այլ հանապազօր պատրաստ եղիր հեզութեամբ եւ երկիւղածութեամբ տալ յուսոյդ պատճառը. (Ա. Պետ. Գ. 15)։

Այս գործ որ կը ներկայանայ քեզ, տպուած է նախ ի Հոլանտա իրը 200 տարի յառաջ, եւ գըրուած է Տիրոջ մի ծառայէն որ աքսորեալ էր վասն

Հաւատոյն։ Ի սակաւ բանս կը պարունակէ բաղում վաստեր։ Հեղինակին միտքը ընթերցողին աւելի պարզ ներկայացնելոյ նպատակաւ, վորքը ինչ փոխեցի գործը, եւ աստ անդ յընթացս գործոյն յաւելի փոքր ինչ ի լրումն նիւթոյն, եւ այժմ կ'ուղարկեմ զայն եռանդագին աղօթիւք որպէս զի ճշմարտութեան Հոգին դնէ զիւր կնիք սորա վերայ, առաջնորդելով զբաղում հաւատացեալս ի շափուղութեան նկատմամբ խնդրոյն զորմէ կը ճառէ այն։

Ոչ ի սէր հակառակութեան, եւ ոչ ալ բարկութիւն գրգռելոյ նպատակաւ, այլ առ սէր Այնորիկ որ ըստ «Այսպէս կը վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն» սոյն գրքոյկ կը յանձնարարէ քո խնամոտ քննութեան,

Բարեկամ քո ի Քրիստոս Յիսուս

ՍԲԸՐՃԸՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սիրելի ընթերցող

Յորժամ ընթերցմամբ Սուրբ Գրոց կը քննես
զկամս Աստուծոյ, թող այս լինի քո Աղաղակ,
«Օձէ Տէր զաջս իմ ի դեղ որպէս զի տեսանեմ», և
եմէ հասած է քո վերայ Աստուծոյ Զօրութեան օր,
անտարակոյս եմ թէ խնդութեամբ պիտի ողջունես
զնշմարտութիւն, ինչ զգեատով որ քեզ ներկայա-
նայ սա, և առաւել թղթոյն պարունակութեան
վերայ պիտի խորհիս, քանի թէ պիտի սոսկաս ի
տեսիլ զձուձ կերպարանաց Պատգամաւորին,
զիտելով թէ «Մեծին Աստուծոյ» թուղթն է այն:
Վասն որոյ ճառելով զնշմարտութենէս, այսինքն
զՄկրտութենէ Հաւատացելոց, որպէս ի կիր ար-
կաւ ի Քրիստոսէ և ի նախնական Եկեղեցեաց, կը
փափաքիմ և կը խնդրեմ որ ընթեռնուս զասաց-
եալսն առանց նախապաշարման: Ընկալ զոր ինչ
համաձայն կը գտանես ճշմարտութեան, համարե-
լով զայն պատուական քան զկեանս քո և դատե-
լով զայն ըստ Սուրբ Գրոց, զի Սուրբ Գիրքն է
միակ Դատաւոր կրօնական խնդրոց:

Որովհետև Քրիստոս է Հիմն ոյր վերայ շի-
նողն երբէք չպիտի կրէ մեսաս, Ա. Կորն. Գ. 44,
ուստի նախ քանի մի դիտողութիւններ յառաջ

Ժ

պիտի բերեմ նկատմամբ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի մկրտութեան , և կը խնդրեմ որ դիտես ուշի
ուշով թէ քանիօն ճիշդ է Սուրբ Գիրք ի պատմել
զհանգամանս մկրտութեան Նորա , որպէս զի ու-
նենամբ մի Ճիշդ Օրինակ և կարող լինիմբ հեշտ-
եաւ ժամանել յԵրանութիւն այնոցիկ որոց նկատ-
մամբ ըսուած է , «Ասոնք կ'երբան Գառին ետեւեն
ուր որ երբայ նա : »



ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԱՍՏՈՒԱԾ ԱՅԻՆ ԲԱՆԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԹԵ ՔՐԻՍՏՈՍ ՄԿՐՏԵՑԱՒ Ի ԳԵՏ ՅՈՐԴԱՆԱՆ

Քրիստոսի մկրտութեան նկատմամբ ընդարձակագոյնս գրուած է ի Մատ . Դ . 15—17 : « Անատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ առ Յովհաննէս մկրտուիլ անկէ : » Աղջու է իւրաքանչիւր բառ համարիս : (անատեն) — նախ քան սկսանելն զիւր Պաշտօն հրապարակային , որպէս է տեսանել ի Մատ . Դ . 17 : « Այնուհետեւ Յիսուս սկսաւ քարոզել : » (Եկաւ) — կարէր նա հրամայել Յովհաննու դալ առ ինքն , բայց ինքն եկաւ ի նշան հնազանդութեան իւրոց : (Գալիլեայէ) — բազումմղոններ , եւ հաւանականաբար հետի . իւրաքանչիւր քայլ զոր կ'առնումք վասն Աստուծոյ , է ընդունելի եւ պիտի ունենայ մի օր զիւր Վարձ Փառաւոր : (Յորդանան) — ուր էր գետ , ուր հազարաւորք մկրտուեցան , զի էր տեղի յարմար Յովհաննու յընկղմել անդր զբրիստոս , որպէս պիտի տեսնուի ի ստորեւ :

Դիտողութեան պիտի առնումք այժմ ութ կէտեր նկատմամբ Քրիստոսի մկրտութեան :

Նախ , նկատմամբ իւր հասակին ըստած է , Յիսուս մկրտուելով , Դուկ . Գ . 21 , սկսած էր լինել

գրեթէ երեսնամեայ, համ. 25. կը տեսնես աստա-
նօր թէ Յիսուս իսկ մլրտուեցաւ ի հասուն հա-
սակի: Եթէ ոք կարէ մլրտուիլ ի մանկութեան, էր
Յիսուս ոչ: Քրիստոնեայք, մի՛ ամաչէք, ձեր Հրա-
մանատարն ձեր առջեւ է, երեսնամեայ էր երբ
մլրտուեցաւ: Քրիստոս ամօթ չհամարիր կոչել զձեղ
Եղբայրներ. Երբ. Բ. 11:

Երկրորդ. Քրիստոսի մլրտութեան մէջ դիտողու-
թեան արժանի երկրորդ կէտը՝ այս ուռերբ Խորհրդոյն
մատակարարն է, Յովիաննէս, որ խոստովանեցաւ
զանձնէ թէ չէր արժանի լուծանել զխրացս կօշ-
կաց նորա, Մարկ. Ա. 7: Արդ՝ եթէ Քրիստոս կը
հաճի ընդունիլ զմլրտութիւն մի այսպիսի անար-
ժան գործիքի միջոցաւ, մի ուրեմն թեթեւու-
թեամբ Խորհրդիր այս Խորհրդոյն վերայ ի պատճառս
անարժանութեան մատակարարին, հաստատէ զաջու-
քո ի Քրիստոս, յօրինակ քո:

Երրորդ. Դիտէ զլացումը, Յովիաննէս կ'արգե-
լոյր զնա. Մատ. Գ. 14: Պարտուց մէջ դժուարու-
թիւնն չպարտի լինել պատրուակ, ոչ ոք պարտի
հրաժարիլ Աստուծոյ հետեւելէ: Զանացէք մտանել
լնդ նեղ դուռն. Մատ. Է. 15:

Չորրորդ. Դիտէ Յովիաննու փաստը. Մատ. Գ.
14. Ինձ պէտք է ինձէ մկրտուիլ, եւ դու ինձի կու
զաս: Են որք չկամին մլրտուիլ, եթէ չսապացու-
ցուիր թէ պէտս ունին այնմ: Նոցա մարմնաւոր
փաստն է, չկարե՞մ երթալ յերկինս առանց մլրտու-
թեան: Հարկաւո՞ր է ի փրկութիւն: Խորհուրդ ան-
սուրբ եւ անձնասիրական: Տէրդ եւ վարդապետդ
այսպէս Խորհեցաւ միթէ: Ո՞չ ապաքէն նա կատար-

եալ Փրկիչ էր : Ո՞չ ապաքէն Հոգին տրուած էր նմա
տուանց չափու : Չունէր նա մեղս ի լուացումն , բայց
եւ այնալէս մկրտուեցաւ : Արդ՝ տես զօրինակ քո ,
զՅիսուս , որ մկրտուեցաւ ոչ առ կարօտութեան ,
այլ՝ առ հնազանդութեան կամաց Հօր իւրոյ :

Հինգերորդ . Դիտէ ընտիր անունները զորս կու-
տայ Յիսուս այս խորհրդոյն : 1. Յիսուս կը կոչէ
զմկրտութիւն Արդարութիւն . Մատ . Գ . 15 : Արդար
եւ ուղիղ է որ ես իմ Հօր գործոյն մէջ գտնուիմ :
2. կը կոչէ զայն գործ վայելուչ , կը վայելէ մեզ .
Ո՛հ , յոյժ վայելուչ է Աստուծոյ զաւակաց ի յար-
դանս ունել զամենայն պատուիրանս Աստուծոյ : 3.
կը յիշէ Յիսուս մի կապակցութիւն իւր եւ իւր ժո-
ղովրդեան միջեւ , զայս կ'ակնարկէ բառդ մեզ -(այս-
պէս կը վայելէ մեզ) : Կամի ասել «Քեզ եւ ինձ , եւ
ամենայն հետեւողաց խմոց» : Յով . ԺԲ . 26 . Երէ ո՛f
կը ծառայէ ինձ , բող զայ իմ ետեւէս . եւ ուր ես
եմ , իմ ծառաս եւս հոն պիտի ըլլայ : 4. Յիսուս կը
համարի զայն լրումն , լնուլ : Մեր նալատակ սլարտի
լինել Բ . Կորն . Ժ . 5 , 6 . Ամէն միտք զերի ընել
Քիսոսի հնազանդութեան : «Պատրաս ենք վրէծ առ-
նուլ ամէն անհնազանդութենէ , երբ ձեր հնազան-
դութիւնը կատարեալ ըլլայ : » Հնազանդութիւն
սլարտ է կատարեալ լինել : 5. Նա կը գործա-
ծէ զբառ ընդհանրական բոլոր արդարութիւնը :
Մկրտութիւնն է մի մասն ամբողջին : Ահա Քիս-
տոս այսալէս կը համարի զՄկրտութիւն . կարող չես
կատարել զամենայն պատուիրանս , եւ ոչ խսկ ընուլ
զամենայն արդարութիւն , եթէ զանց կ'առնուս
զՄկրտութիւն :

Վեցերորդ . Ի Մկրտութեան Յիսուսի Նկատելիէ նաեւ եղանակ Մատակարարմանն , Մատ . Գ . 16 . Եւ իսկոյն դուրս ելաւ զուրէն : (իսկոյն) — քանզի Մկրտութիւնն է միանգամ ընկղմումն : (Դուրս) — եթէ իջած չլինէր ի ջուրն , չպիտի ըսուէր դուրս ելաւ : (Ելաւ) — ուրեմն չին կրէր Յիսուս ի գիրկս որպէս սովոր են այժմ առնել զմանկունս : (Դուրս) — եթէ ելաւ դուրս ի ջրոյն , ուրեմն էր նախ ի ջուրն . չեմք կարող ըսել վասն ուրուք թէ՝ դուրս ելաւ ի տանէն , եթէ երբէք չիր մտած անդր , այսպէս եւ չիր կարելի ըսել Քրիստոսի համար թէ՝ ելաւ դուրս ի ջրոյն , եթէ չիր նախ ի ջուրն : (Դուրս ելաւ) — եթէ բերուած լինէր նմա սակաւ ինչ ջուր բաժակաւ ի Մկրտութիւն , պիտի չըսուէր թէ՝ դուրս ելաւ անտի : (Զուրէն) — այս ջուրն էր Գետ Յորդանան : Քրիստոս կը զիջանի Նկատողութեան առնուլ մանր բաներն եւս , զի այսոքիկ միացած են Աստուածային մի հրամանի հետ :

Եօրներորդ . Դիտէ , Նկատմամբ մկրտութեան Քրիստոսի , զընդունելութիւն Հօրն . Մատ . Գ . 16 . (Երկինք բացուեցաւ) — ոմանք ի Հաւատացելոց Քրիստոսի տեսած են զիառաւոր բացումն Երկնից : (Հոգին իջաւ) — նոյն Հոգին որ խոստացեալ է Հաւատացելոց ի Մկրտութեան , Գործ . Բ . 38 . ապահսարեցէք , եւ իւրաքանչիւր ի ձենջ բող մկրտուի եւ պիտի ընդունիք զՀոգին Սուրբ : (Եւ ահա ձայն յԵրկնից եկաւ որ կ'ըսէր , Դա է իմ սիրելի Որդիս) — Քրիստոս իբրեւ Գլուխ իւր Եկեղեցւոյն կնքուեցաւ ամբողջ մարմնոյն համար , եւ ի Մկրտութեան կը յայտնուի Որդիութիւն իւր Անդամոց : (Որուն

հանած եմ) — ոչ միայն հաճած եմ ընդ ամենայն զոր ինչ ըրած է եւ կ'ընէ, այլ եւ ընդ այս գործ Մկրտութեան իբրեւ գործ հնազանդութեան իմ փառաւոր կամաց : Այսպէս եւ հաճած է Տէր ընդ նոյն գործ հնազանդութեան բոլոր հաւատացելոց որք ի սրտէ հնազանդեցան այն վարդապետութեան զաղափարին որ յանձնուեցաւ նոցա, Հռով. Զ. 17 : Այս նոյն ճայն վկայեց Աստուծոյ Օրհնեալ Որդւոյն համար ի վերայ Լերան, ասելով, Դա է իմ սիրելի Որդիս, ասոր լսեցէք, Ղուկ . Թ. 36 : Ղսեցէք նմա իւր սպատուիրանաց եւ հրամանաց մէջ . լսեցէք նմա այժմ ի մկրտութեան իւրում: Ո՛հ, կը վկայելէ մեզ, կ'ըսէ Քրիստոս, Դուք որ ունիք զշայր իմ Հայր ձեր, զԱստուած իմ Աստուած ձեր, այսպէս կը վսցելէ մեզ մկրտուիլ եւ լնուլ զամենայն արդարութիւն . Նա է Աստուծոյ սիրելի Որդին, Նմա լուարուք :

Ուրեցորդ. Դիտէ թէ՝ որպէս ի մկրտութեան Քրիստոսի կը յայտնուի Եռանձնութիւն, Հայր կը խօսի ճայնիւ, Որդին կը մկրտուի, Հոգին Սուրբ Կիջնէ աղաւնակերպ, եւ ահա սլատճառն ոյր վասն Մկրտութիւն կը մատակարարուի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Արբոյ, վասն զի այն որ կը հաւատայ անկեղծութեամբ եւ կը մկրտուի, ունի իւր ի բաժին զամբողջ Երրորդութիւնն : Երրորդութեան փառաւոր միութիւնն՝ որ յայտնուեցաւ ի մկրտութեան Քրիստոսի, կը յիշատակուի ի մկրտութեան իւրաքանչիւր հաւատացելոյ, ուստի եւ արժանի մեր յարդական խորհրդոյն : Այն որ կ'արհամարհէ մի խորհուրդ՝ յորում կը կոչուի այդ նուիրական

Անունն , պարտի զգոյշ կալ զի մի դուցէ յանցա-
պարտ դտնուի ընդ վայր առնլոյն աղադաւ զանուն
Տեսուն :

ԳԼՈՒԽ Բ.

ՅԱՆԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏՈՒԻՐԻՆ ՎԱՍՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՏԱՑԵԼՈՅ

Որպէս լսեցիր դիտողութիւններ նկատմամբ քո
մեծ Օրինակին , Տէր Յիսուսի , նոյնպէս եւ պիտի
լսես դիտողութիւններ նկատմամբ նորա հրամանին ,
Մատ . Իլ . 19 : Եւ կը խնդրեմ որ նկատողութեան
առնուս որ ինչ ըստւած է զբրիստոսէ ի Գործ . Ա . 1:
Ուր կ'ընթեռնումք թէ Քրիստոս կ'ընէր եւ կը
սորվեցնէր . պատշաճ է ուսուցչաց նմանիլ Քրիս-
տոսի ընելու եւ ուսուցանելու մասին : Ի համ .
2 . կ'ընթեռնումք թէ՝ համբարձաւ նա յետ պատ-
ուեր տալոյ առաքելոց ի ձեռն Հօգևոյն Արբոյ :
Եւ Հաւատացելոց Մկրտութիւն , որպէս է տե-
սանել ի Մատ . Իլ . 18 . 19 , 20 , էր մին ի պատ-
ուիրանաց անտի : Աստուած դրաւ զնա իւր ժողո-
վրդեան վրայ Առաջնորդ եւ Հրամանատար , Ես . ԾԵ . 4:
Իրբեւ հրամանատար պարզեւ մի է Քրիստոս . ոչ ,
որպիսի ողորմութիւն է ունել մի այսպիսի իմաս-
տուն հրամանատար , որոյ պատուիրանք առ հա-
ւատացեալսն չեն ծանր . նորա պատուիրանները
պահելուն վարձէր տաս է . Մաղ . ՃԹ , 11 : Արդ՝
նորա այս պատուիրանին մէջ ութ կէտեր արժանի
են նկատողութեան , ընթեռնումք նախ ամբողջ
հատուածը ուր կայ այդ պատուիրան . « Եւ Յիսուս

մօհենալով խօսեցաւ անոնց եւ ըսաւ, ամէն իշխա-
թիւն տրուեցաւ ինձ յերկինս եւ յերկրի : Ուրեմն զա-
ցէք աշակերտեցէք բոլոր ազգերը, մկրտեցէք զնոսա
յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ : Սորվեցու-
ցէք անոնց պահել ամեն ինչ որ պատուիրեցի ձեզ.
Եւ ահա ձեր հետ եմ ես ամեն օր մինչեւ ի կատա-
րած աշխարհիս : Ամէն» :

A 900

Նախ . Դիտէ թէ ուստի զայր Քրիստոս երր
տուաւ զայս մեծ հրաման : Գայր նա ի գերեզմանէ ,
էր նա Յիսուս Յարուցեալ . Աստուած իւր Որդին յա-
րուցանելով առաջ դրկեց զնա ձեզ օրինել զձեզ : Դորձ .
Գ. 26 : Արդարեւ այս Օրհնեալ Յիսուս պիտի չհրա-
մայեր ինչ որ չը յօդուտ իւր ժողովրդեան . Նա
օրհնեալ Յիսուսէ . եւ կու տայ օրհնեալ հրամաններ .
Լրանելի են անոնք որ կը կատարեն Անոր պատուիրան-
ները , որպէս զի իշխանութիւն ունենան կենաց ծա-
ռին վրայ , եւ մտնեն դուռներէն ներս քաղաքը . Յայտ
իթ . 14: Պարտիմք յիշել թէ Յարուցեալ Փրկիչ
մի է որ կ'ըսէ . Դացէք , աշակերտեցէք եւ մկրտեցէք :

Երրորդ . Դիտէ թէ Քրիստոս անձամբ « մօհե-
նալով խօսեցաւ անոնց » : Արդ՝ եթէ մի հրեշտակ
երեւէր եւ հրամայէր մարդոց մկրտուիլ , ով յայն-
ժամ պիտի հակառակէր այդմ . բայց հոս Աստու-
ծոյ փառաւոր Որդին կ'երեւի եւ կ'ըսէ . Դացէք ,
աշակերտեցէք եւ մկրտեցէք :

Երրորդ . Դիտէ թէ որպիսի իշխանութեամբ
կու գայ նա . Մատ . ԽԸ . 18 . « Ամէն իշխանութիւն
տրուեցաւ ինձ յերկինս եւ յերկրի » . ամէն իշխանու-
թիւն ի հրամայել եւ յերկինս եւ ի վերայ երկրի .
ամէն իշխանութիւն ի կառավարել զերկին եւ զեր-

կիր։ Ունիմ ընդ իմով իշխանութեամբ զՀրեշտակ եւ զՄարդիկ կարող եմ պաշտպան կալ ձեզ, կալ առ ընթեր ձեր, եւ լինել ընդ ձեզ եւ ի հուր եւ ի ջուր, ուստի, Գացէք աւակերտեցէք բոլոր ազգերը. ունիմ ամենայն իշխանութիւն, Գացէք ուրեմն աւակերտեցէք եւ մկրտեցէք։ Մի երկնչիք ի թշշնամեաց, այլ Գացէք, աւակերտեցէք եւ մկրտեցէք։

Չորրորդ. Դիտէ նոյն իսկ պատուիրանը. Մատիլ, 19. Քրիստոս ըսաւ. Գացէք, աւակերտեցէք եւ մկրտեցէք։ Քրիստոս ըսաւ դիւաց լէդէոնին, Գացէք. Մատ. Է. 59, եւ նոքա անսացին։ Իսկ Հաւատացեալք պիտի նուազ հնազանդ լինին քան զդեւս։ Ո՞չ ապաքէն պարտ է հաւատացելոց լինել ժողովուրդ յօժարակամ ի հնազանդութիւն յաւուր իշխանութեան նորա։ Հարիւրապետն կ'ըսէր միայն, Գացէք. եւ ծառայք նորա կ'երթային։ կ'ըսէր միայն, Եկէք, եւ նոքա կու գային։ կ'ըսէր եւեթերէք զայս. եւ նոքա կ'ընէին զայն։ Քրիստոսի ծառայք նուազ հնազանդութիւն պիտի յայտնեն Ո՛չ, հնազանդիմք իսկոյն, զի Նա ըսաւ, Գացէք, աւակերտեցէք եւ մկրտեցէք։

Հինգերորդ. Դիտէ թէ ի՞նչ բան նախընթաց է Մկրտութեան. Գացէք աւակերտեցէք. Հարկ է Աշակերտել։ Աստուած Հոգի է, եւ կը պահանջէիւր երկրպագուներէն որ երկրպագանեն հոգւով եւ ճշմարտութեամբ. Յով. Դ. 24։ Ուստի Աշակերտութիւն պարափ կանխել զՄկրտութիւն, եթէ ոչ, չկարէ ոք երկրպագել նմա հոգւով եւ ճշմարտութեամբ։ Գացէք աւակերտեցէք եւ մկրտեցէք։ Յիսուս իսկ նախ կ'աշակերտէր եւ ապա կը մկրտէր։

Յով. Դ. 1. Յիսուս քան զՅովհաննէս աւելի աւակերտներ կ'ընէր եւ կը մկրտէր : Քանի քանի անձինք տղիսութեամբ կը մկրտեն զայնալիսիս որք բնաւ չեն աշակերտեալ, բայց Քրիստոս կ'ըսէ . Առակերտեցէ եւ մկրտեցէ զնոսա :

Վեցերորդ. Դիտէ զտարածութիւն հրամանին : Առակերտեցէ բոլոր ազգերը եւ մկրտեցէ զնոսա : Գացէք առ ամենայն ազգս որ կը բնակին ցուց եւ ջերմ կլիմաներու մէջ . զացէ առ Հրեայս եւ հերանոս, առ արև եւ կանայս մարդկային ազգին, եւ յետ աշակերտելոց մկրտեցէք զնոսա : Կործանեալ է այժմ մէջտեղի բաժանող սլատը : Աստուած չդնէր այլեւս խտիր մարդոց մէջ : Ո՛չ ոք այլեւս թող խորհի թէ ունի հայր զԱբրահամ : Ո՛չ, ո՛չ, գացէք առ ամենայն ազգս, հրատարակեցէք զուրախարար աւետիս Աւետարանին առ ամենայն արարածս, Մարկ. ԺԶ. 15, 16. Ով որ հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի . Երբ աշակերտած էք զնոսա, մկրտեցէք : Գացէ, առակերտեցէ բոլոր ազգերը, մկրտեցէ զնոսա :

Եօրեներորդ. Դիտէ զբառս պատուիրանին . Մատ. իմ. 19: Ուրեմն զացէ առակերտեցէ բոլոր ազգերը, մկրտեցէ զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ : Դիտէ նախ (մկրտեցէ զնոսա յանուն Հօր) — Անոնց՝ որ կ'ընդունին զՏէր Յիսուս ըստ պայմանաց Աւետարանին, Աստուած Հայր պիտի լինի, եւ նոքա պարտին մկրտուիլ յանուն նորա : Գացէ . եւ կոչեցէք, ելէ անոնց մէջէն, անհաւատներէն եւ յայսպիսեաց, եւ զատուեցէ, եւ ես հայր պիտի ըլլամ ձեզ, եւ դուք որդիի եւ դսերի

պիտի ըլլաք ինձ. Բ. Կորն. Զ. 17, 18: Ապշեցէք, եւ զարմացէք մի վայրկեան, դուք որ չնշին ինչ կը համարիք զՄկրտութիւն: Ինչ որ կը կատարուի հոս երկրի վրայ յանուն թագաւորի, ունի իւր հետ մեծ իշխանութիւն, իսկ կայ հոս անուն մեծին Աստուծոյ: Այո՛, հոս կայ անուն խորհրդաւոր Երրորդութեան, Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ կը կարծես թէ՝ Մկրտութիւն՝ որ կը կատարուի յայն փառաւոր անուն պաշտելի եւ երկրագագելի, չունի ինչ յինքեան: Մի՛ այլ եւս չնշին ինչ համարիր այլ միտ դիր անոր որ ըսաւ, Գացէք աւակերտեցէք բոլոր ազգերը, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Ուրերորդ. Դիտէ խոստումը որ միացած է այս խորհրդոյն հետ. Եւ ահա ձեր նետ եմ ես ամէն օր մինչեւ ի կատարած աւխարինիս: Նա ըսաւ, Գացէք մկրտեցէք եւ ես ձեզի նետ պիտի ըլլամ, համ. 20: Քրիստոս բարի ընկեր մի է, դուք որ կը սիրէք իւր ընկերութիւնը, պարտիք վնտուել զայն հոն ուր խոստացած է. Հին շափաներուն համար հարցուցէք քէ նրն է բարի նամբան, եւ անոր մէջը ժալեցէք, որ ձեր հոգիներուն հանգիս զննէք. Երեմ. Զ. 16: Կայ ուրիշ տեղ մը հանգիստ հոգւոյն բաց ի Քրիստոսէ: Ո՛չ, ո՛չ, ի ներկայութեան Նորա կը զննուի լիութիւն ուրախութեան, բայց ո՛չ ուրիշ տեղ: Կ'ուզէք վայելել զներկայութիւն իւր, ըրէք նման Զաքէնսի, մտէք ի ճանապարհն. հաւատացէք եւ մկրտուեցէք, զի կու գայ նա այս ճանապարհէ: (Մկրտեցէք). Եւ ես ձեզ հետ պիտի լինիմ ամէն օր մինչեւ ի կատարած աշխարհիս. (Ամէն):

իւր պատուիրանաց եւ խոստման կը յաջորդէ մի Ամէն : Մեր ամենալաւ բարեկամին հրաժեշտի խօսքերն են այսոքիկ . Մկրտեցէք զաւակերս եւ ահա ես ձեզ հիտ եմ : Ո՞չ ապաքէն պարտիմք յարգել եւ կատարել զհրաման սիրեցելոյն մերոյ :

Գ Ա Ռ Ի Խ Թ Գ.

Օ Ր Ի Ն Ա Կ Ք

Սուրբ Գիրք կու տայ մեզ օրինակս հազարաւորաց որք մկրտուեցան ի գետս , նոքա ամենեքին էին այնպիսի անձինք որք դաւանեցան հաւատք եւ ապաշխարութիւն , եւ էին ի հասակի կարող պատասխանելոյ վասն անձանց :

Առաջին օրինակ . Երբ կարդամք այն անձանց վրայով զորս մկրտեց Յիսուս . Յովին . Դ . 1 . ըսուածէ թէ՝ աւակերտներ կ'ընէր եւ կը մկրտէր : Նախ աշակերտ կը լինէին եւ ապա կը մկրտուէին . նոքա աշակերտ կը լինէին ոչ թէ կը ծնէին աշակերտ , այսինքն՝ կ'աշակերտուէին քարոզութեամբ Բանին Աստուծոյ , եւ ապա կը մկրտուէին :

Երկրորդ օրինակ . Ա.յլ օրինակ կը գտնուի ի Գործ . Բ . 41 : Եւ անոնք որ ի սրտէ ընկալան անոր խօսերը՝ մկրտուեցան : Ասոր պատճառն գրուածէ ի համ . 57 . զղջացին իրենց սրտերուն մէջ : Զէին գիտեր ինչ պարտէին ընել , մեղաց զգացումը ծանրացած էր նոցա վերայ , եւ աղաղակեցին , «Արք եղբարք ինչ ընենք .» առ որ պատասխանեց

Առաքեալն , համ . 58 . Ապաշխարեցէք , եւ ձենէ իւրաքանչիւր ո՛ք քող մկրտուի յանուն Յիսուսի Քրիստոսի ի քողութիւն մեղաց , եւ պիտի ընդունիք Հոգույն Սրբոյ պարզեւը . համ . 41 : Վկրաւորեալ սրտին քաղցր է ողորմութիւն : Մի այսպիսի անձ չկասիր ու եւ է պարտուց առջեւ , ոչ եւս կը վարանի , այլ ամենայն ուրախութեամբ կ'ընկղմի ի ջուր ըստ հրամանին Քրիստոսի : Ուրախամիտ հաւատացեալք յօժար են հնազանդիլ Տեառն իւրեանց . եւ այն օր իբր երեք հազար անձինք աւելցան , համ . 41 :

Երրորդ օրինակ . Այլ օրինակ կը գտնուի ի Գոր . Ը . 12 . Բայց երբ հաւատացին Փիլիպպոսի որ կը քարոզէր Աստուծոյ քազաւորութեան եւ Յիսուսի Քրիստոսի անուան վրայ , - կը մկրտուէին արք եւ կանայք : Դիտէ , երբ հաւատացին . — Սամարացիք , համ . 5 , եւ պարախմք գիտնալ թէ սոքա էին յայնցանէ ոյց վերայ կրակ իջուցանել կ'ուզէին աշակերտք , Ղուկ . Թ . 52 , 54 , բայց երբ հաւատացին սոքա , մկրտուեցան արք եւ կանայք : ԱՌ , որչափ որ մերձ լինիս ի Դժոխս , հաւատա միայն եւ մկրտուէ , կայ ողորմութիւն վասն քո : Բայց քաջ դիտէ թէ անոնք որ մկրտուեցան , դաւանեցան լինել հաւատացեալ եւ էին Արք եւ Կանայք :

Չորրորդ օրինակ . Հաւատացելոց Մկրտութեան այլ օրինակ ունիմք ի Գործ . Ը . 55 : Կ'ընթեռնումք թէ՝ Փիլիպպոս քարոզեց ներքինւոյն զՅիսուս : Եւ եկան զուրի մը բովլ : Եւ ըստ ներքինին , Ահա զուր , ինչ բան կ'արգելու զիս մկրտուելէ , համ . 56 : Ապա Փիլիպպոս ըստ , նրէ իու քոլոր սրտովդ կը հաւատաս , հնարաւոր է , համ . 57 : Այս նրէ բառը ար-

ժանի է ուշադրութեան։ Նրէ լինիս իսկ աղքատ
կամ անարդ ոք, երէ Աստուած կը բերէ քեզ ի հա-
ւասս, յայնժամ կարես մկրտուիլ դու, բայց ոչ
այլ ոք։ Կը խնդրուի հոս ոչ իւր ծնողաց բարեսլաշ-
տութիւն, ոչ սլարասլումն իւր Աստուածային Բա-
նին, ոչ դալն իւր յերուսաղէմ յերկրագութիւն,
եւ ոչ իսկ յօժարութիւն իւր ի մկրտութիւն, այլ
հաւատք իւր — Նրէ կը հաւատաս, հնարաւոր է։
Ի Յոյնն դրեալ է, օրինաւոր է։ Համաձայն է օրի-
նաց Քրիստոսի։ Հաւատացելոց միայն օրինաւոր է
մկրտուիլ։ Ապա, կ'ընթեռնումք թէ, երկոնեան ի-
ջան զուրը, Փիլիպպոս եւ Եերքինին, եւ մկրտեց
զնա, համ. 38։ Ահա մի այր, գանձապետ եթով-
պիոյ թագուհոյն, այր մեծատուն, այր պատուա-
ւոր, այր կրօնասէր, այր որ ունէր հաւանականա-
բար շուրջ զկառօքն խումբ սպասարկուաց։ Ներ-
քինին կը հրամայէ նոցա կեցունել կառքը, մինչեւ
որ մատուցանէ ինքն հնազանդութիւն առ Տէր
մկրտութեամբ։ Նա կարէ այժմ իջանել ի ջուր վասն
անոր որ էջ յերկնից վասն իւր։ Ամօթ չհամարիր
հնազանդիլ Քրիստոսի որ կը խօսի իրեն իւր խո-
նարհ ծառային միջոցաւ, Փիլիպպոսի։ Ո՛վ զիջմանն
ճշմարտապէս շնորհալից անձին։ Ո՛չ մի փաստ այն-
չափ ազդեցութիւն ունի որչափ Մէրը։ Ուստի Ն-
րէ կը սիրէք զիս իմ պատուիրաններս պահեցէք։
Նման Քրիստոսի փառաւոր եղանակին, կը տեսնեմք
հոս իջանել եւ ելանել։ Նա կ'ընկենու նախ ի վայր,
եւ ապա կը կանգնէ ի վեր։ Նախ կ'իջուցանէ ի գե-
րեզման, եւ ապա կը յարուցանէ անտի, ասելով,
Դարձարուք, որդիք մարդկան։ Դարձեալ կ'ընթեռ-

նումք մկրտեալ ներքինւոյն վրայով, Եւ իւր նամբան կ'երբայր ուրախուրեամբ, համ. 59: Ո՛հ, որպիսի յաղթութիւն ի ճանապարհին Քրիստոսի, Նորա պատուիրանաց պահպանութեան մէջ (թէեւ ոչ վասն պահպանութեան) կայ (եւ պիտի գտնուի) վարձ մեծ: Կ'ընթեռնումք թէ՝ իւր նամբան կ'երբայր, եւ արդարեւ գրուած է, Եւ արդարը հաստատի կենայ իւր նամբուն մէջ, եւ մահուր ձեռք ունեցողը երբալով պիտի զօրանայ. Յոր. Ժէ. 9: Որչափ անձինք կասեցան ճամբուն մէջ, լային ճամբուն մէջ, նուաղեցան ճամբուն մէջ, բայց երբ մկրտուեցան, գնացին զՃանապարհ իւրեանց ուրախուրեամբ: Ունէր գուցէ սիրտ տխուր, թէեւ էր գանձապետ հարուստ: Հարստութիւն չէր կարող գոհ ընել զնա, բայց մկրտուելով, զնաց իւր նամբան ուրախուրեամբ: Այսպէս եղեւ եւ բանտապետին որ մկրտուելով, Բոլոր տամբ ուրախ եղաւ, հաւատալով յԱստուած: Դործ. ԺԶ. 53, 54:

Հինգերորդ օրինակ. Յաջորդ օրինակն է մկրտութիւն մեծահաշակ առաքելոյն Պօղոսի: Կարդա Գոր. ԻԲ. 16. Եւ հիմա այլ եւս ինչ կը յապահես. Ել, մկրտուէ եւ լուա մեղեցրդ: Կամիս Ընուլ զհոգիդ ուրախութեամբ: Կամիս զԲրիստոս ընդունիլ Տէր քո: Ուրեմն էր կը յապաղես. Ել եւ մկրտուէ: Այն որ երեւցաւ ինզ ի նանապարհին երբ դաւ էիր մի հալածող. Եւ կասեցոյց զեզ երբալէ ի Դժոխս յոր կը վազէիր ուրտափոյք, նա առաքեց զիս, ըսաւ Անանիա. Գործ. Թ. 15, 17: Եւ հիմա այլեւս ինչ կը յապահես. Ել եւ մկրտուէ: Դու հալածող էիր, բայց պիտի լինիս այժմ քարոզիչ չարչարակիր, Գործ. Թ.

15. 16. վասն որոյ այլ եւս ինչ կը յապաղես. ել եւ մկրտուէ : Ընկալ իսկոյն զսլայմանս եւ զսլարգեւս Աստուածային ողորմութեան : Ինդութեամբ ողջունէ զողորմութիւն . մի՛ յապաղեր եւ ոչ իսկ մի օր : Է՞ր կը յապաղես : Անարժան ոք կը համարիս զանձդ , վասն որոյ եւ կը յապաղես : Խորհուրդ այդպիսի թող՝ չարգելու գքեզ . ի դիմաց Տեսոն կը յայտարարեմ քեզ , անօթ ընտիր ես դու . Գործ. Թ. . 15 : Յօժար է Տէր ի ներել զամենայն մեղս քո զառաջինս , եւ ընդունել զքեզ ըստ սլայմանաց Աւետարանին , եւ հիմա այլ եւս ինչ կը յապաղես . ել եւ մկրտուէ . եւ մեղերդ լուա :

Վեցերորդ օրինակ . Այլ օրինակ Մկրտութեան Հաւատացելոց է մկրտութիւնն Բանտապետին . Գործ. ՃԶ. 50, 51, 52 : Նա գնաց ի ննջել ի մեղս իւր , եւ պիտի զարթնոյր գուցէ ի Դժոխս , բայց արդիւեց զնա ողորմութիւն Աստուծոյ , եւ փրկեց զհոդի եւ զմարմին նորա : Ի ճայն բարձր աղաղակեց Պօղոս . վնաս մի ըներ անձինդ , կայ յոյս վասն քո : Եւ նա պատասխանեց դողալով . «ինչ ընել պարտ է ինձ :» Անձն այն որ կը դողայ առաջի Ամենակալ Աստուծոյ , ոչ միայն կ'աղաղակէ թէ ինչ պարտիմ ունենալ , այլ եւ թէ՝ ինչ պարտիմ ընել . հաւատն , ըսաւ Պօղոս , հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի : Եւ ի ցոյց յօժարութեանն հնաղանդելոյ առ Տէր Յիսուս , եւ ընդունելոյ զնա ըստ պայմանաց Աւետարանին , մկրտուեցաւ գիշերուան նոյն ժամուն . համ. 53 : Դիտէ նաեւ . համ. 54 , թէ՝ բոլոր իւր տուն հաւատացին եւ մկրտուեցան : Որչափ անձինք հաւատացին , նոյնչափ անձինք մկրտուեցան :

Եօրներորդ օրինակ . Ունիմք այլ օրինակ , գլխ-
դիա , Գործ . ԺԶ . 14 , մի բարեպաշտ կին , կին մի
աղօթասէր : Աստուած բացաւ զսիրտ նորա ուշա-
դրութիւն ընելու Պօղոսի խօսքերուն , եւ որովհե-
տեւ գետեղերքն էին , նա մկրտուեցաւ : Երբ փակ-
ուած է սիրտ մարդ չկամիր հնազանդիլ Քրիստոսի :
Մի քարշողութիւն Քրիստոսէ՝ կու տայ հոդւոյնըն-
թանալ արագութեամբ , Երգ . Ա . 4 : Բացաւ Տէր
զսիրտ քո հաւատալու Աւետարանին , կարես մկրտ-
ուիլ դու , բայց ոչ այլ ոք :

Ուրերորդ օրինակ . Ունիմք այլ օրինակ եւս ի
Գործ . ԺԸ . 8 . Եւ Կրիսպոս ծողովրդապետն իւր բո-
լոր տամբ հաւատաց ի Տէր , եւ Կորնրացիներէն տա-
սեր լսելու հաւատացին , եւ մկրտուեցան : Կրիսպոս
հաւատաց , իւր տուն հաւատաց , — ամենեքին նախ
հաւատացին եւ ապա մկրտուեցան : Համայն օրի-
նակը ձուլեալ են յայսմ կաղապար :

Ահա այսպէս ունիմք թէ Օրինակ եւ թէ Հրաման :
Եթէ Հրաման կամ Օրինակ՝ ունի զօրութիւն , կը
գտնուին հոս երկոքին եւս : Զգոյշ եղիր , զի մի
գուցէ մեղանչես ընդդէմ մի այսակիսի բացերեւ
վարդապետութեան : Յիրաւի կը մեղանչէ այն որ կը
մեղանչէ ընդդէմ Հրամանի եւ Օրինակի :



Գ Լ Ո Ւ Խ Պ .

ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ Է ԸՆԿՂՄՍՈՒՄՆ ԿԱՄ ՇԱՇԿՈՒԻՆ ԶՐՈՅՆ ՏԱԿ

1. Յունարէն վարրիզո բառն կը նշանակէ ընկղմել⁽¹⁾։ Այսպէս Քրիստոս ընկղմեցաւ ի ջուր, Մատ. Դ. 16. Այսպէս ընկղմեցաւ նա ի չարչարանսն, Դուկ. ԺԲ. 50. Մկրտութիւն մը ունիմ մկրտուելու, եւ ինչպէս կը տագնապիմ մինչեւ կատարուի:

2. Կայ եւրոպական թարգմանութիւն Սուրբ Գրոց՝ յորում գրուած է, այն օրերը եկաւ Յովիաննեն Հնկղմիչ, Մատ. Դ. 1. Այդ թարգմանութեան մէջ ըսուած է նաեւ թէ՝ Յովիաննէս կ'ընկղմէր յԱյենոն, զի հոն շատ ջուր կար: Ի՞նչ պէտք շատ ջրոց, եթէ ոչ ընկղմելոյ համար :

3. Մկրտութիւնք տեղի ունեցան ի գետս. կ'ելնէին առ Յովիաննէս եւ կը մկրտուիին անկէ Յորդանանու մէջ Մատ. Գ. 6: Յովիաննէս կը մկրտէր յԱյենոն, քանզի հոն շատ ջուր կար. Յով. Գ. 23. Է՞ր գետոց մէջ: Է՞ր ի շատաջուր տեղւոջ: Սակաւ ինչ ջուր ի գաւաթի չքր բաւեր ի սրսկումն երեսաց :

4. Մկրտութիւն կը նշանակէ զթաղումն Քրիստոսի: Անոր հետ բաղուեցանք մկրտութեամբ մահուան համար, Հռով. Զ. 4: Թաղուելով անոր հետ մկրտութեամբ, Կող. Բ. 12: Արդ՝ մեք չեմք համարիր զոք

(1) Ե. Հ. Հայ զրագէտք ոմանք հաւանական կը համարին Թէ Հայերէն Մկրտութիւն բառն եւս կը նշանակէ ընկղմումն ի ջուր, ունենալով իւր ծագումն միւրնել բայէն:

թաղեալ, երբ սակաւ ինչ հող սրսկուի յերեսս նորա, բայց կը թաղուի, երբ կը ծածկուի . այսպէս թաղուեցաք դուք մկրտութեամբ :

5. Չարչարանք Քրիստոսի կոչուած է մկրտութիւն . Դուկ. ԺԲ. 50: Մկրտութիւն մը ունիմ մկրտելու, եւ ինչպէս կը տագնապիմ մինչեւ կատարուի : Երբ չարչարուեցաւ Քրիստոս, ընկղմեցաւ ի նեղութիւն : Նորա չարչարանք իւր գլխոյն կամ ճակատո՞ւն վերայ էր միայն : Ո՞չ, ոչ մի մասն էր զերծ . յոտից ցգլուխ էր ի նեղութեան : Պսակուած էր գլուխ նորա պատառող վշովք, ձեռք եւ ոտք նորա բեւեռեալ էին ի Խաչ . եւ իւր ամբողջ անձ այնպէս տարածեալ կայր ի Խաչին, այնպէս որ մէկը կրնար համբել զամենայն ոսկերս նորա . Սաղ. ԻԲ. 17: Ոչ մի մասն չիր ազատ ի չարչարանաց . Մեղանչեց ամբողջ մարդք, մարմինք՝ անձն եւ հոգին, վասն որոյ եւ ամբողջ Քրիստոսի պարտ էր չարչարուիլ վասն մեղաց : Քրիստոս մկրտուեցաւ ի նեղութիւնս, ընկղմեցաւ ի վիշտ, ո՞չ մի մասն էր ազատ . ահա կը կոչէ նա զայս չարչարանս մկրտութիւն իւր : Այսպէս եւ մկրտեալ ոք է ընկղմեալ ջրոյ տակ ի նշանակ ընկղմանն Քրիստոսի ի վիշտս վասն մեր :

6. Մկրտութիւնն է զգենուլ զՔրիստոս . Քանզի դուք ամենեղ որ Քրիստոս մկրտուեցաք, զՔրիստոս հագած էք . Գաղ. Գ. 27: Այս համար կը նշանակէ թէ՝ որպէս կ'զգենու ծառայն իւր տիրոջ նշանազգեստը (պաշտօնական զգեստ ծառայից), որ կը յայտնէ թէ նա ծառայ է մի յոյժ բարձր անձնաւորութեան, այսպէս ի Մկրտութեան կ'զգենումք եւ մեք զնշանազգեստ Տեառն մերոյ, եւ ինքն է

որ անձամբ կ'զգեցունի՛ զմեղ յոտից ցգլուխ , այս-
պէս ահա կ'զգենումք դժբիստոս Մկրտութեամբ
որ կը կատարուի թաղմամբ ի ջուր յոտից ցգը-
լուխ :

7. Երբ Յիսուս Մկրտեցաւ , իսկոյն դուրս ելաւ
ջուրէն , Մատ . Գ . 16 : Յիսուսի Մկրտութիւն երեսաց
վերայ սակաւ ինչ ջուր նետուելո՞վ կատարուեցաւ :
Ուրեմն չէր Յիսուս ի ջուրն , եւ չէր կրնար ըսուիլ
թէ՝ դուրս ելաւ անկէ : Բայց որովհետեւ մկրտե-
ցաւ ջրոյ մէջ , ուստի յետ մկրտութեան դուրս ե-
լաւ անկէ : Փիլիպպոս եւ Ներքինին . երկոնեան իշան
ջուրը , (եւ անդ մինչ էին ջրոյ մէջ) Փիլիպպոս մը-
կրտեց զներքինին : Երկոքին դուրս ելան ջուրէն .
Գործ . Ը . 59 : Բայց ինչո՞ւ իշան հոն , եթէ Փիլիպ-
պոս սրսկեց կամ քափեց միայն ջուր Ներքինւոյն
գլխոյն վերայ :

Այսպէս տեսնուեցաւ թէ տեղին յորում մկրտ-
ուեցան այս այլեւայլ անձինք , էր գետ կամ ջուր
ինչ . նոցա զործողութիւն էր այս եղանակաւ — նո-
քա կ'իշանէին ի ջուրն , ապա , լինելով ջրոյ մէջ ,
կը մկրտուէին : Մկրտութիւն կը կատարուէր հոն ուր
կար ջուր շատ : Նպատակ այսր էր ցուցանել զթա-
ղումն Քրիստոսի . արդ՝ եթէ չիք թաղումն ընդ
ջրով առ ի նշանակ թաղմանն Քրիստոսի , յայնժամ
այս խորհրդոյն մեծ նպատակ կորուսեալ է . բայց
քաջ կը նշանակուի թաղումն Քրիստոսի ընկղմամբ
ընդ ջրով :

Հարցում . Բայց Էր չէ բաւական սրսկումն ջրով
որպէս ծածկել ընդ ջրով , ջրոյ շատութեան մէջ կայ
զօրութիւն առաւել բան սակաւ ինչ ջրոյ մէջ :

Պատասխան · Սրսկումն չէ բաւական որպէս է ընկղմումն ջրոյ տակ :

1. Քանզի Աստուած է նախանձոտ Աստուած , եւ կը պաշտպանէ իւր երկրագութեան ամենափոքր մասերն անդամ : Հաւանական է թէ Նաղար եւ Արիուդ կարծեցին թէ ևթէ օտար կրակ դնեն ի բուրվառին , անիկա պիտի ծառայէր նպատակին , թէ եւ անիկա չլինէր Սեղանէն . բայց Աստուած կը կոչէ զայն օսար կրակ , ուստի եւ կ'այրէ զնոսա օտար կրակով , Ղեւտ . Ժ. 1, 2: Դիտէ զոր ինչ կը յաւելու Մովսէս . համ . 5. Այս է որ Տէրը խօսեցաւ՝ բաելով , Ինձի մօտեցողներուն մէջ սուրբ պիտի սեպուիմ , ու բոլոր ժողովուրդին առջեւը պիտի փառաւորուիմ : Աստուած հրամայեց Մովսէսի խօսել ժայռին , իսկ Մովսէս զարկաւ ժայռին , ուստի եւ մեռաւ արտաքոյ բանանու . Թու . Ի . 8, 11, 12: Ուրեմն որքան զգուշութեամբ պարտիմք նկատել ամենամանը պարագաներն օրինաց Աստուծոյ :

2. Սրսկումն չէ բաւական , զի անով խորհուրդն կը կորուսանէ իւր նպատակը , որ է ցուցանել զՄահ , զԹաղումն եւ զՅարութիւն Քրիստոսի . Հոռվ . Զ . 4. Անոր հետ քաղուեցանք մկրտութեամբ մահուան համար , որ ինչպէս Քրիստոս փառօք Հօր յարեաւ ի մեռելոց , նոյնպէս եւ մենք քալենք կենաց նորողութեան մէջ : Սրդ՝ ոչ սրսկումն եւ ոչ հեղումն ջրոյ կարող են ցուցանել Թաղումն , ուստի եւ չեն պատասխաներ նպատակին :

3. Սրսկումն չէ բաւական , զի չէ այդ հրամայեալն ի Տեսառնէ : Բորոտ Նէեման կը կարծէր թէ

Դամասկոսի ջուրք համազօր էին ջուրց Խորայէլի ,
կամ առաւել ազդեցիկ , ուստի եւ ըստ , Միքէ չեմ
կրնար անոնց մէջը լուացովիլ եւ մաքրովիլ . Դ. Թագ .
Ե . 12 : Աստուած հրամայած էր նմա ընկղմիլ ի
Յորդանան , ոչ վասն զի այդ ջրոյ մէջ կայր առա-
ւել զօրութիւն , այլ վասն զի Աստուած հրամայեց
նմա լնկղմիլ ի Յորդանան . ուստի երբ հնազանդե-
ցաւ , մաքրուեցաւ : Աստուծոյ հրամանն է ընկղմել
ուստի եւ ոչ մի այլ եղանակ կարէ դրուիլ փոխան
անոր :

4 . Սրսկումն չէ բաւական , վասն զի չէ համա-
ձայն օրինակին — Քրիստոս իջաւ ի ջուրն , որով
հետեւ դուրս ելաւ ջուրէն . Մաս . Դ . 16 : Փիլիպ-
պոս եւ Ներքինին իջան ի ջուրն . Գործ . Ը . 58 :
Տես , ամէնը ըլնես ըստ օրինակին որ ցուցուեցաւ
մեզ , Երբ . Ը . 5 : Մեզ չէ անկ հնարել նոր արարո-
ղութիւններ եւ նոր կերպեր , այլ հետեւիլ՝ մեզ
ցուցուած օրինակին , որպէս զի մի գուցէ յանցա-
պարտ գտնուիմք իրրեւ կամապաշտ :

5 . Սրսկումն չէ բաւական , վասն զի մեծ յանձ-
նապաստանութիւն է փոխել զկանոնս Աստուծոյ :
Աստուած չէ բաւական իմաստուն սահմանել իւր
երկրագագութիւն եւ յայտարարել անոր եղանակը :
Եսայի կ'ըսէ , Եւ երկիր իւր բնակիչներուն տակը
պղծուեցաւ , բանզի անոնք օրէնքները զանց ըրին ,
պատուիրանքը փոխեցին . Ես . ԻՊ . 5 : Մեզ չէ վա-
յել այլայլել մինչեւ իս'կ զմի յովտ կամ նշանախեց
հրամանին Տեառն :

6 . Սրսկումն չէ բաւական , վասն զի սրսկումն
չէ Մկրտութիւն : Չէ այդ զոր ինչ կը կամի Աստ-

ուած : Մկրտութիւնն է ընկղմել : Սրսկումն չէ ընկղմումն, ուստի եւ չծառայեր իրեւ մկրտութիւն : «Եւ բոլոր ժողովուրդը եւ մահաւորները եր լսեցին, արդարացուցին զԱսուած, որ Յովիաննու մկրտուրեամբ մկրտուեցան : Բայց Փարիսեցին եւ Օրինականն իրենց անձին դէմ Ասուծոյ խորհուրդն անարգեցին, որ անկէ չմկրտուեցան : » Ղուկ . է. 29. 50 : Աստուծոյ խորհուրդն է Մկրտուրիւն այսինքն Ընկրղմումն, մի մերժէք զայն :

ԳԼՈՒԽ Ե.

Թէ ԶՐՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ Է ՄԻՆՁԵՒ ՑԵՐԿՐՈՒԴ ԳԱԼՈւստ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅԱՅՏՆԻ ԿԸ ԼԻՆԻ ՀԵՏԵւԵալ դիտողութիւններէ :

Թէ ԶՐՈՎ Մկրտութիւն շարունակելի է մինչեւ ցերկրորդ գալուստ Յիսուսի Քրիստոսի, յայտնի կը լինի հետեւեալ դիտողութիւններէ :

1. Դիտէ թէ ԶՐՈՎ Մկրտութիւն անգամմի հրամայուեցաւ եւ երբէք յետս չկոչուեցաւ այդ հրաման, եւ ոչ մի իշխանութիւն կարէ յետս կոչել զհրաման Քրիստոսի, բայց եթէ Յիսուսի նոյն իշխանութիւն որով տրուեցաւ այն : Պարտիմք մրցիւ «Այն հաւատոյն համար որ անգամ մը աւանդուեցաւ սուրբերուն .» Յուդա համ . 5 :

2. ԶՐՈՎ Մկրտութիւն ի կիր արկաւ յետ Յարութեան Քրիստոսի : Գործ . Բ. 41 : Ը. 12 : 38 : Ժ . 47 : եւն :

5. Զրով Մկրտութիւն հրամայեալ է յետ յառութեանն Քրիստոսի . Մատ . ի Ը . 19: Գացէք աւակերեցէք բոլոր ազգերը , եւ մկրտեցէք զնոսա : Եթէ Զրով Մկրտութիւն դադարած լինէր մահուամբ Քրիստոսի , պիտի չհրամայուէր եւ պիտի չգործադրուէր յետ Յարութեան Նորա :

4. Նկատէ թէ՝ առարկայ այս Խորհրդոյն որպէս եւ Տէրունական Ընթրեացն կը մնայ տակաւին : Նպատակ Ընթրեաց է ցուցանել զլլահ Տեառն մինչեւ որ գայ ինքն . ուստի եւ կը կատարուի ի յիշատակի նորա : Ցորչափ կը կարօտիմք յիշել զլլահ Քրիստոսի , նոյնչափ ժամանակ պիտի սլահուի այս Խորհուրդ ի յիշատակի նորա , մինչեւ ցերկրորդ Գալուստ իւր : Այսպէս եւ Մկրտութիւն կը ցուցանէ զլլահ , զթաղումն և զՅարութիւն Քրիստոսի . Հոռվ . Զ . 5 , 4 , 5 : Եւ որովհետեւ կը մնայ անոր առարկայն եւ նպատակը , պիտի մնայ անոր Նշանակիչ Խորհուրդն եւս ցերկին Գալուստ իւր :

5. Նկատէ նաեւ թէ Մկրտութիւն ի գործ դրուած է Քրիստոնեաներէ ամեն դարերու մէջ , յորմէ հետէ յանձնեց Քրիստոս իւր Հրամանն առ Սուրբա : Է՞ր ուրեմն ճգել վէճի տակ Խորհրդոյս շարունակութիւնն :

6. Նկատէ թէ՝ նոյն փաստը որ Զրով Մկրտութեան դէմ կը բերուի , եթէ վաւերական համարուի , չհակառակիր նաեւ ամենայն պատուիրանաց : Զի , եթէ ընդունուի թէ , երբ Հոգին կու գայ Մկրտութիւն կը դադարի , յայնժամ հաւասարապէս կրնայ ըսուիլ թէ՝ երբ Հոգին կու գայ , Քարոզութիւն կը դադարի , Աղօթք կը դա-

դարի : Այսպիսի պատճառաբանութիւն կը բզիսի միայն յապականեալ սրտէ մարդոյ , զի կ'առաջնորդէ ի զանցառութիւն համայն Քրիստոնէական Օրինաց : Թոյլ չտամք մի այդպիսի պատճառաբանութեան արդելու զմեզ հնաղանդելէ Քրիստոսի : Ընեմք որպէս եւ կը հրամայէ Տէր մեր Յիսուս Քրիստոս : «Գացէք աշակերտեցք բոլոր ազգերը , մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Ռդույ եւ Հոգւոյն Մրդոյ . Սորվեցուցէք անոնց պահել ամէնի ինչ որ պատուիրեցի ձեզ . եւ անու ձեր նես եմ ևս ամէնի օր մինչեւ ի կատարած աշխարհիս : Ամէն : Մատ . իր . 19 . 20 :

ՊԼՈՒՑ Զ.

Թէ ոք ՄԻ ԶԱՓ ՇՆՈՐՀԱՑ ԿԱՄ ՀՈԳԻՈՅ , Է ԲԱՒԱԿԱՆ ՊԱՏՁԱՌ ԱՐԳԵԼՈՒԼ ԶՈՔ Ի ՄԿՐՏՈՒԹԵՆԵ ԶՐՈՎ

Թէ ոչ մի չափ չնորհաց կամ պարդեւաց Հոգւոյ է բաւական պատճառ պահել զոք հեռի ի Մկրտութենէ Զրով , յայտնի կը լինի հետեւեալ խորհրդածութիւններէ :

1. Նկատէ թէ՝ յերկնից է Մկրտութիւն . Մատ . ին . 25 , 26 : Արդ՝ ի՞նչ բան կ'արէ արդելու զմեզ հնաղանդելէ մի երկնային Հրամանի :

2. Նկատէ թէ՝ Տէր Յիսուս Քրիստոս ունէր զամենայն չնորհս եւ զշոգին առանց չափու . Յուլ . Գ . 54 , եւ սակայն մլրտուեցաւ ի գետ Յորդանան ,

Մատ. Գ. 15, 14, 15: Քրիստոս հաւատացելոց համար հետեւելոց արժանի բարի օրինակ մի չէ:

5. Նկատէ թէ՝ Աստուած ոչ ուրեք սահմանափակ ըրած է զլրկոտութիւն սակաւաշնորհաց կամ անձանց, որք չափաւոր կերպիւ ընդունած են զՀոգին: Ոչ, ընդհակառակն, ոչ ապաքէն խոստացած է Աստուած զՀոգի իւր, որպէս զի պահեն մարդիկ զօրէնո իւր եւ կատարեն զայնս: «Եւ անոնց մէկ սիրս պիտի տամ, եւ անոնց ներսի դին նոր նոզի պիտի դնեմ, եւ անոնց մարմնեղեն բարեղէն սիրոք պիտի հանեմ, եւ անոնց մարմնեղեն սիրս պիտի տամ, որպէս զի իմ օրէնքներուս մէջը բալեն, ու իմ իրաւունքներս պահեն, եւ անոնք ինձի ծովովուրդ ըլլան. ես ալ անոնց Աստուած ըլլամ: Եզեկ. ԺԱ. 19. 20:

4. Նկատէ թէ՝ Ասաքեալն զՀոգին ընդունիլն կը դործածէ իրքեւ փաստ մարդիկ քաջալերելու համար ի Մկրտութիւն: «Կրնայ մարդ արգելու ջուրը որ չմկրտուին ատոնք, որ զՀոգին Սուրբ եւս բնկալան իրքեւ զմեզ,» Գործ. Ժ. 47: Արդ՝ եթէ ուշ դնես, ասոնք այնպիսի եղանակաւ մը մկրտուածէին Հոգւով, մինչեւ կը խօսէին լեզուներ եւ կը մարդարէանային. պարդեւ մեծ էր խօսել լեզուս եւ մարդարէանալ. Հոգւոյ այսպիսի չափ ոչ ոք ունի ներկայ ժամանակիս մէջ, բայց եւ այնպէս անոնց նրամայեց որ մկրտուէին Տէրոջը անուամբ. Բամ. 48:



ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՏՈՒՔԻ ՄԵԾ Է ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՀԱԽԱՑԱՑԵԼՈՑ

Հաւատացելոց Մկրտութեան Պատուիրանին մեծութիւն կուգայ ի յայտ , եթէ ի նկատի առնուն հետեւեալ եօթն մասնաւոր պարագաները :

1. Նկատէ թէ՝ Մկրտութիւն է պատուիրան որ ունի զմեծ Օրինակն որով կը լինի պարտաւորիչ , զի մեր փրկութեան հրամանատարն իսկ ի գործ դրաւ զայն անձամբ , որպէս յայտնի է ի Մատ . Գ . 15 : Ան ասեն եկաւ Յիսուս մկրտուիլ : Եթէ ոք կը ծառայէ ինձ , կ'ըսէ Քրիստոս , Թող զայ իմ ետեւէս , եւ ուր ես իմ ծառաս եւս հոն պիտի ըլլայ . Յով . ԺԲ . 26 : Քրիստոս լաւագոյն է յօրինակս , չե՞ս ուզեր հետեւիլ Գառին ուր որ երթայ :

2. Նկատէ մեծ Անունը որով կը մատակարարուի Մկրտութիւն . Մատ . ԻՂ . 19 , 20 . Մկրտեցէք զանոնի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ . Աշ ոք պարտի առ ոչինչ գրել զայս Անուն , զի Մեծին Աստուծոյ Անունն է :

3. Նկատէ թէ գործ մեծ է Մկրտութիւն , զի կոչուած է Արդարութիւն . մեծ ինչ է Արդարութիւն զոր կը կոչէ Քրիստոս բան վայելուչ . Մատ . Գ . 15 : Այսպիս կը վայելէ մեզ լիուլ զամենայն Արդարութիւն : Լնուլ է այդ զամենայն արդարութիւն , ուստի եւ չէ գործ չնչին :

4. Նկատէ թէ՝ Մկրտութիւն է մեծ Հրաման , զի մին է այն ի վերջին պատուիրանաց մեր օրհնեալ

Փրկչին յետ Յարութեան իւրոյ , սակաւիկ ինչ յառաջ քան զՀամբարձումն , որպէս յայտնի է ի Մատիլ . 19. 20 . Դացէք , աշակերտեցէք եւ մկրտեցէք :

Յ . Նկատէ թէ՝ Մկրտութիւն միացեալ է մեծամեծ խոստմանց եւ կարեւոր ճշմարտութեանց հետ . Մատիլ . 19 , 20 : Դացէք աշակերտեցէք եւ մկրտեցէք , եւ ահա ես ընդ ձեզ եմ ամէն օր . ահա խոստումն վառաւառոր ներկայութեանն Քրիստոսի ընդ նոսա որք կ'աշակերտին եւ կը մկրտին :

Դարձեալ՝ տրուած է նաեւ է զխոստումն պարզեւաց Հոգւոյն Սրբոյ . «Ապահսարեցէք , եւ ձենէ խւախանչիւր ո՛վ բող մկրտուի . . . եւ պիտի ընդունիք Հոգւոյն Սրբոյ պարզեւը» . Գործ . Բ . 58 :

Մկրտութիւնն տրուած է նաեւ իրրեւ նշան լուացման մեղաց . «Ել , մկրտուէ եւ լուա մեղիերդ» . Գործ . 16 : Զրով մկրտութիւն ինքնին շլուար զմեղս , քանզի Սիմոն մոգ մկրտուեցաւ եւ տակաւին էր ի գաւնութեան մաղձի , սակայն երբ ի գործ կը դրուի հաւատավլ , յայնժամ կենդանի խորհրդանան է առ հաւատացեալն եւ սփոփիչ նշան լուացման իւրոյ ի մեղաց : Անտարակոյս կը նշանակէ այս թէ՝ Մկրտութեան լուացումն է , արտաքին նշան լուացման մեղաց Քրիստոսի արեան միջոցաւ :

Դարձեալ՝ փրկութեան խոստումն յիշուած է Մկրտութեան հետ . «Ով որ նաւատայ ու մկրտուի , պիտի փրկուի» :

Արդ՝ Ներկայութիւն Քրիստոսի , Պարգեւք Առւրբ Հոգւոյն , Թողութիւն մեղաց եւ Պարգեւ Փրկութեան — այս ամենայն յիշեալ են մկրտութեան հետ ի Մատենին Ճշմարտութեան :

6. Նկատէ նաեւ Մկրտութեան վսեմութիւնն : Աստուծոյ խրաքանչիւր խօսք լի է կարեւորութեամբ , սակայն Մկրտութիւնն ունի մասնաւոր պատիւ որ հաւատոց հետ քով քովի դրուած է Փրկութեան գործոյն մէջ : Սուրբ Գիրք չըսեր թէ՝ Ով որ հաւատայ եւ ընծունի ի Տէրունական Ընթրեաց պիտի փրկուի : Ո՛չ ալ մի այլ պատուիրան դրուած է այս բարձրութեան մէջ . բայց յոյժ որոշակի կ'ըսէ . Ով որ հաւատայ եւ մկրտուի պիտի փրկուի . Մարկ . ԺԶ . 16 . Արդ՝ չէ մեծ ինչ Մկրտութիւն որ միացեալ է Հաւատոց , արմատին եւ մօր ամենայն շնորհաց , որով կ'արդարանան եւ կ'առլրին մարդիկ :

7. Նկատէ թէ՝ Քրիստոս հրամայեց զՄկրտութիւն յետ Համբարձմանն իսկ , Դործ . 8 . 29 : Հոգին հրամայեց Փիլիպպոսի մօտենալ կառաց . տըրուեցաւ այս հրաման որպէս զի կարող լինէր քարոզել զՔրիստոս Ներքինւոյն , եւ մկրտել զնա . Եւ երբոր մկրտուեցաւ , իւր ճամբան կ'երբայր ուրախութեամբ : Ահա կոչումն յերկնից Մկրտութեան մէջ . Փիլիպպոս կոչուեցաւ ի մկրտել :

Այլ հրաման յերկնից ի մկրտել յետ Համբարձմանն Քրիստոսի ունիմք յառաքմանն Անանիսյ ի Քրիստոսէ առ . Պօղոս , Դործ . Թ . 10 . 11 : Տէրը կը կոչէ զԱնանիս ի Տեսլեան եւ կ'առաքէ զնա առ . Պօղոս , եւ գալով անոր կ'ըսէ . եւ հիմա այլ եւս ինչ կը յապաղես . ել եւ մկրտուէ : Դործ . ԻԲ . 16 : Պօղոս կ'իմացունէ թէ՝ այս էր բան Անանիսյ :

Դարձեալ՝ կունելիոս ընկալաւ կոչումն յերկնից կոչել զՊետրոս որ պիտի խօսէր նմա զբանս փրկութեան , Դործ . Փ . 4 . 5 : Պետրոս ընկալաւ յերկնից

Հրաման երթալ, առ կոռնելիս, համ . 19, 20 : Դնա
եւ մի տարակուսիր: Ահա յերկնից կը յանձնարարուի
Պետրոսի, երթալ եւ խօսել խօսքեր որովք պիտի
առաջնորդուի կոռնելիս ի փրկութիւն . եւ երբ
եկաւ առ կոռնելիս եւ կը քարոզէր . եւ ահա ընկե-
րացաւ քարոզութեան նորա հեղումն Սուրբ Հոգւոյն
ի վերաց այնոցիկ որք կը լսէին զայն, համ . 48.
եւ անոնց հրամայեց մկրտուիլ: կը տեսնես ահա թէ
Մկրտութիւն հրամայուեցաւ յետ Յարութեանն Քը-
րիստոսի . եւ այս ամենայն կը ցուցանէ պարզապէս
թէ Մկրտութիւնն է մի մեծ պատուէր :

Գ. Լ. Ո. Խ. Խ. Բ.

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹԵԱՅ Ց ՊԱՏԱՍԽԱՆԻ

Այնչափ ապականեալէ սիրտ մարդոյ, որ մինչեւ
անգամ կ'առարկէ ընդդէմ ամենաալարզ ճշմարտու-
թեան Բանին Աստուծոյ, վասն որոյ մարդիկ կ'ընեն
առարկութիւններ ընդդէմ Մկրտութեան Հաւատա-
ցելոց : Բայց չեմք զարմանար ասոր համար, քանզի
Աստուծածային ո՞ր ճշմարտութեան հետ նենդանօք
վարուած չեն մարդիկ . Այո՛, նոյն ինքն Աստուծ
սուարկայ եղած չէ առարկութեան : Բայց կրնամ
ըսել Մկրտութեան նկատմամբ, որպէս ըսաւ ան-
գամ մի Պօղոս . այս բանը անկիւնի մը մէջ չեղաւ:
Կ'ընեմ միայն այս Սուրբքրական ազդարարու-
թիւնը . դրուած է ումանց վրայով . Դրենց աշենը

գոցեցին, որպէս զի չըլլայ թէ տեսնեն եւ դառնան
ու ես բծեկեմ զանոնք: Զգուշացիր փակելէ զաչս
քո: Բայց եթէ յօժար ես տեսանելու զձմարտու-
թիւն, հաւասարի ևմ թէ պիտի բերուիս ի յօժա-
րութիւն հնազանդելոյ այս պատուիրանին յաւուր
զօրութեան Աստուծոյ: Սակայն եթէ ունիս ի խղճի
տարակոյս ինչ, եւ կը փափաքիս գոհ ընել զայն,
նկատէ զպատասխանիս յետագայ առարկութեանց:

Առարկութիւն 1. Ոմանք կ'ըսեն թէ՝ Զրով Մը-
կրտութիւնը պիտի տեւէր միայն ժամանակ մը, եւ
նիմա նասած է վախնանին. զի, կ'ըսեն նոքա, ըս-
ուած է ի Մատ. Իլ. 19, 20. մինչեւ ի կատարած
աշխարհիս, եւ այս կը նուանակէ. — ի կատարած
այդ դարուն, եւ նշ անկէ եքը:

Առ որ կը պատասխանեմ, այս չկրնար լինել
իմաստ բնաբանին. նախ, վասն զի Քրիստոս հրա-
մայեց Առաքելոց սորվեցնել անոնց պահել ամեն
ինչ որ պատութեց Մատ. Իլ. 20: Արդ՝ կը
կարծէք թէ ամէն ինչ որ առաքեալք պիտի սոր-
վեցնէին անոնց պահել, սահմանեալ էին միայն
մինչեւ ի կատարած նոյն դարուն: Քրիստոս ինչպէս
պատուիրեց նոցա մկրտուիլ, նոյնպէս պատուիրեց
ապաշխարել, հաւատալ եւ լինել սուրբ, արդ՝ ը-
սմնք թէ ասոնց ամենը պարտ էին լինել միայն մին-
չեւ ի կատարած այն դարուն (՝՝): Երկրորդ,
Քրիստոս կը խոստանայ իւր ներկայութիւնն մինչեւ
ի կատարած աշխարհի, Մատ. Իլ. 20. ահա ես
ընդ ձեզ եմ ամեն օր մինչեւ ի կատարած աշխարհի:
Արդ՝ ո՞վ կրնայ ըսել թէ Քրիստոս խոստացաւ իւր
ներկայութիւնն մինչեւ ի կատարած Հարկանէ դա-

րուն։ Ասոկալի վարդապետութիւն պիտի լինէր այս Նա ըսածէ «Ենզ պիտի չբողում, ու Ենզ անտես պիտի չընեմ, Յես. Ա. 5։ Իւր ներկայութեան խոստումն պիտի տեւէ ամեն դարերու մէջ։ զի նոյն խօսքը կրնայ վերածուիլ ասոր։ Ես պիտի լինիմ ընդ ձեզ ամեն դարու մէջ, կամ, մինչեւ ի կատարած աշխարհիս. ուրեմն պահեցէք ամեն բան ամեն դարերու մէջ կամ ի կատարած աշխարհիս։

Առարկութիւն 2. Բայց Զրով Մկրտուրիւն Յովիաննու Մկրտուրիւնն էր։

Կը պատասխանեմ — Ո՞չ ապաքէն Քրիստոս հըրամայեց, եւ Եկեղեցիք կատարեցին զՄկրտութիւն յետ մահուանն Յովիաննու եւ Յարութեանն Քրիստոսի։ Չ'ըսանւ Քրիստոս, Պատէք, աշակերտեցէք իւ մկրտեցէք։ Եւ պիտի ըսես թէ Յովիաննու Մկրտութիւնն էր այս։

Առարութիւն 3. Բայց ոչ թլփատուրիւն եւ ոչ անրլփատուրիւն տան ունի, բայց նոր արարած լինելն։

Կը պատասխանեմ. — Էր ժամանակ յորում թ-ըլփատութիւնն էր բան մը, զի Տէրը պիտի սպաննէր զՄովսէս իւր որդւոյն թլփատութիւնը զանց առնելուն պատճառաւ. Ելից. Դ. 24, 25, 26։ Նաեւ ըսաւ Տէր. Եւ անրլփատ արուն՝ որոյ անրլփատուրեան մարմինը թլփատուած չէ, ան անձը իր ծոլովուրդէն պիտի կորսուի Ծն. Ժէ. 14։ Աւետարանին Տնօրէնութեան ներքեւ թլփատութիւնը բան մը չէ, զի խափանած է, Պաղ. Ե. 2։ Երէ թլփատուիք, Քրիստոս օգուտ չըներ ձեզ։ Բայց կրնաս հետեւցնել ասկէ թէ՝ որովհետեւ թլփատութիւնը բան մը չէ, վասն զի Աստուած ջնջած է զայն, ու-

րեմն Մկրտութիւնը եւս բան մը չէ, ոչ երբէք .
զի Աստուած չէ խափանած այլ հրամացած է զայն :
Տէր Յիսուսի Քրիստոսի հրամանն է Մկրտութիւն ,
Մատ . ԽԸ . 19 : Կըյանդգնիս ըսել թէ ոչինչ է նորա
հրամանն . Քաւ լիցի :

Առարկութիւն 4. — Մկրտեալ եմ Հոգովի որ խա-
կուրիւնն է . Զբով Մկրտութիւն ստուեն է միայն :

Կը պատասխանեմ . — Կրնաս այսպէս ըսել ուրիշ
պատուիրանաց համար եւս թէ նոքա ստուերք
են միայն . Տէրունական Ծնթրիքը միայն ստուերք է ,
Աղօթք , Ունկնդրութիւն եւ Քարոզութիւն Աստ-
ուածային Բանին միայն ստուերներ են . եւ երբ
կը հասնիս այս կէտիս եւ կը թողուս զայս ամենայն ,
ուր պիտի վախճանի քո ճանապարհ : Դարձեալ
ստուեր է Մկրտութիւն , թէ ոչ , այս չէ ինդիրն .
այլ թէ՝ Քրիստոսի հրամանն է այն : Եթէ Նորա
հրամանն է , մի հակառակիր իշխանութեան նորա ,
զի մի գուցէ բարկանայ : Ստուեր է այն՝ թէ ոչ , չէ
քեզ անկ վնասել զայս , մի վիճաբանիր քու Տիրոջդ
հետ , ընդունէ խրատ Մարիամու , «ինչ որ բաէ ձեզ ,
ըրէք : » Դարձեալ , համարէ թէ Մկրտութիւնը է
ստուեր , սակայն պէտք է գիտնաս թէ Քրիս-
տոս իսկ հնագանդեցաւ այդ պատուիրանին , եւ ով
ես գու որ կը մերժես : Քրիստոսէ իմաստուն մէկն
ես գու : Ի Դործ . Փ . 47 . 48 , կը կարդամք թէ՝
կունելիսս եւ անոր հետ եղողները մկրտուեցան
Հոգով , եւ խօսեցան լեզուներ , եւ սակայն մկրտ-
ուեցան ջրով եւս . Անատեն Պետրոս պատասխան
տուաւ , Կրնայ մարդ արգելուլ զուրը որ չմկրտութին
ասանք , որ զՀոգին Սուրբ եւս ընկալան իրեւ զմեզ :

իւ հրամայեց որ մկրտուէին Տէրոջը անուամբ . անասեն աղաջեցին զնա մնալ քանի մը օր : Յիշէ թէ այն որ հաւատարիմ է ի վոքուն . հաւատարիմ է ի բաղմին :

Առարկութիւն 5. — Մկրտութիւնը չը բռներ Թլիփատութեան տեղը :

Կը պատասխանեմ. — Յիբաւի ոչ . զի Աստուծոյ խօսքին մէջ այդպիսի բան չկայ , եւ դու պարախա չլինել իմաստնագոյն քան որ գրեալն է : Դարձեալ՝ նկատէ թէ՝ Թլիփատութիւն լոկ արական սեռին կը վերաբերէր , բայց մենք կընթեռնումք ի Գործ . Ը . 12 . Երբ հաւատացին , մկրտուեցան , եւ էին արէ եւ կանայք :

Առարկութիւն 6. — Բայց բազում ուսեալ անձինք պատասխան են Մանկամկրտութեան :

Կը պատասխանեմ. — Զկայ մոլորութիւն որ գոտած չլինի պաշտպաններ նոցա մէջ՝ որք ուսեալ լինելոց համբաւն ունին , մինչ մեծաւ մասամբ ճշմարտութիւն չարաչար ի կիր առնուած է անոնց միջոցաւ : Փարիսեցիք եւ Օրինականք (այն ժամանակին ուսեալ անձինք) իրենց անձանց գէմ Աստուծոյ խորհուրդը անարգեցին , որ չմկրտուեցան ի Յովհաննէ . Ղուկ . Է . 50 : Մի ըսեր անոնց պէս , իշխաններէն մէկը հաւատանց անոր : Ունկն դիր Քրիստոսի պատասխանւոյն : Պատասխան տուաւ Յիսուս եւ ըսաւ , Շնորհակալ եմ իենէ ով Հայր , Տէր երկնի եւ երկրի , որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն եւ գիտուններէն , եւ յայտնեցիր տղայոց . Մաս . ԺԱ . 25 : Եւ դարձեալ՝ եթէ փաստ է ուսումն այս պատագային մէջ , բազմաթիւ կարտինալք եւ ծիզուիթք

ուսեալ մարդիկ չե՞ն , ուրեմն Պապական պարտիւ լինել :

Առարկութիւն 7. — Բայց չկան բարեպատ անինք , հովիւք եւ եկեղեցիք որք կ'ընդունին զՄանկամկրտութիւն :

Կը պատասխանեմ . — Կան անտարակոյս . բայց դու պարտաւոր ես հետեւիլ մի առաքելոյ որչափոր նա կը հետեւի Քրիստոսի : Պօղոս կ'ըսէ , Ա. Կորն. ԺԱ. 1 , Նմանող ինձ եղէք , ինչպէս եւ ես Քրիստոսի : Աստուծոյ յայտնի խօսքին դէմ մի՛ ըերեր բարի մարդոց օրինակը , զի բարի մարդոց իսկ հնար է սխալիլ : Աստուծոյ խօսքը որոշակի կ'ըսէ ի Գործ . Ը. 12 . Երբ հաւատացին , մկրտուեցան , արք եւ կանայք . Եւ ընդդէմ ասոր , բարի մարդոց եւ հովուաց օրինակը չունի կշխու : Եղիս բարի մարդէր , աս հուր իջոց յերկնից . բայց մեզ չէ պարապայակէս ընել : Յովասապիատ բարի թագաւոր էր , բայց իւր թագաւորութեան ժամանակ բարձր տեղուանք չվերցան . Գ. Թագ . ԻԲ . 45 : Աստուծոյ պարզ խօսքին դէմ եղող օրինակի մի՛ հետեւիր : Զարութիւն ընելու համար բազմութեան չինեւիլս . Ել . ԻՊ . 2 :

Առարկութիւն 8. — Բայց Սուրբ Դրոց մէջ չկայ խօսք ընդդէմ Մանկամկրտութեան :

Կը պատասխանեմ . — Նադար ու Արփուդ այրեցան կրակով , զի ըրին ինչ որ չէր հրամայած Տէր , Նետ . Ժ. 2 . 5 : Զգոյշ եղիր երկրագելէ Աստուծոյ եղանակաւ մի , որ բացայաց կերպով չէ հրամայուած : Դարձեալ՝ եթէ « խօսք » բառով ըսել կուզես « որոշ խօսք » , ո՞ւր կրնաս դանել ուրեմն

իսուք ընդդէմ Պատղական հնարքներու : Միթէ Սուրբ
Դիրք կ'ըսէ՞ . չմկրտս զանգակ . ուր ըսուած է թէ
չզործածնս ի Մկրտութեան քուք , կողի եւ աղ , որ-
պէս կը գործածեն Պատղականք : Դու չես տար թոյլ
մի Պատղական քահանայի այդպիսի մի փաստ գոր-
ծածել . վասն է՞ր ուրեմն կը գործածես դու : Պար-
տիս գիտնալ թէ չհրամացելն Տեառն զլլանկամկըր-
տութիւն՝ բաւական է դատապարտել զնա :

Առարկութիւն 9. — Բայց ամբողջ ընտանիքներ
չմկրտուեցան :

Կը պատասխանեմ . — Որոշ կերպով ըսուած է
թէ՝ անոնք ամէնքնալ հաւատացին : Բանոտապետին
նկատմամբ կ'ընթեռնումք թէ՝ Գործ . ԺԶ . 55 . Եւ
վաղվաղակի մկրտուեցաւ ինք եւ բոլոր իրենները ,
բայց 54 համարին մէջ ըսուած է , եւ բոլոր տամբ
ուրախ եղաւ հաւատալով յԱսուած : Կրիոպոս ժո-
ղովրդապեսն իւր բոլոր տամբ հաւատաց ի Տէր , եւ Կո-
րնքացիներէն շատեր լսելով հաւատացին եւ մկրտուե-
ցան , Գործ . ԺԼ . 8 : Լիդիա եւ իւր տուն մկրտուե-
ցան , Գործ . ԺԶ . 15 : Զէ յիշուած հոս այր կամ
զաւակ , ոչ ալ գիտեմք թէ՝ օրիորդ մի էր թէ կին
ոք այրի . գիտեմք սակայն թէ անոնք որ կը բնա-
կէին Լիդիայի տան մէջ , կոչուած են եղբայրներ ,
Համ . 40 : Մեր օրով կան բազում մկրտեալ ընտա-
նիք որոց մէջ չկան մանկունք , կային այսպիսի ըն-
տանիք Առաքելոց օրով , զի Դուկաս կ'ըսէ մեզ թէ
նոքա ամենեքին հաւատացին , մինչ մանկունք կա-
րող չեն հաւատալ :

Առարկութիւն 10 . Մանկունք Եկեղեցւոյ անդամ-
ներ էին ի հնումն , եւ չենք գտներ քէ անոնք կտրուեցան :

կը պատասխանեմ . — Հրէայ ժողովուրողն
որ բնական ձիւզեր էին կտրուեցան ի պատճառս
անհաւաստութեան իւրեանց : Եթէ գային ի հաւա-
տս , կը պատուաստուէին վերատին . սակայն որչափ
ժամանակ որ կը մնան առանց հաւատոյ , նոյնչուփ
ժամանակ են կտրուած , Հռովլ . ՓԱ . 20 . 21 . Այն-
պէս որ ամեն առանձնաշնորհութիւն՝ զոր ունէին
Հրէայ մանկունք իրբեւ մարմնաւոր սերունդք դա-
դարած է այժմ , ուստի եւ ոչ ոք կարէ փաստ յա-
ռաջ բերել զայդ , զի Աւետարանական Տնաեսու-
թեան մէջ , դրուած է տապարն ծառերուն ար-
մատին եւ ամէն ծառ որ չբերեր բարի պտուղ , կը
կը կտրուի եւ կը նետուի կրակը . Մատ . Գ . 9 . Եւ
մի խորհիք դուք յանձինս ձեր լսել , թէ մենք ունիմք
հայր զԱրքահամ (կամ զայլ ո՛ք յառաջին հաւատա-
ցելոց) , զի դուք անձամբ պարտիք հաւատալ , եթէ
կուզէք ունենալ իշխանութիւն Լինել որդիք Աստ-
ուծոյ : Ահա այս է Աստուծոյ հաստատուն խօսքը
որ կատարուեցաւ խոկ ի հնումն , զի Սադուկեցիք
մերժուեցան , երբ եկան ի Մկրտութիւն , որք կը
խորհին յանձինս լսել , Ունիմք հայր զԱրքահամ .
Մատ . Գ . 7 , 8 , 9 : Դարձեալ՝ մանկունք էին ան-
դամիք Հրէական ազգոյին եկեղեցւոյ . բայց ուր
եւ երբ եղան մանկունք անդամիք Աւետարանական
եկեղեցւոյ : Երբ մանկունք անդամ էին , արծա-
թագին ծառայք ալ անդամ էին , Ծն . Փէ . 12 .
զի Աստուծած հրամայեց Արքահամու թլիատել բո-
լոր իւր ծառաները , թէ եւ ոռքա չէին սերեալ
յիւրմէ : Կրնաց մէկը իրբեւ փաստ յառաջ բերել
թէ՝ որովհետեւ Արքահամու բոլոր ծառայք թլիատ-

ուեցան, ուստի բոլոր հաւատացելոց ծառայք ալ սլարտին մկրտուիլ, հաւատան կամ ոչ, եւ լինել անդամ Եկեղեցւոյ :

Աւետարանական Տնտեսութեան ներքեւ Աստուած կը պահանջի; որ իւր երկրազգուք՝ երկրազգեն հոգւով եւ նուարտութեամբ . Յով . Դ . 23 : ի՞նչ օգուտ ունի ուրեմն մարմնաւոր սերումն : Եւ դարձեալ՝ կար ի սկզբան միջնորմն բաժանման Արրահամու սերնդեան եւ մարդկութեան մնացեալ մասին մէջ . բայց այս միջնորմն բաժանման քակուած է այժմ, Նիւե . Բ . 14 : Եւ հիմա աշառութիւն չկայ առ իյԱստուծոյ . այլ ամէն ազգի մէջ ով որ անկէ կը վախնայ եւ արդարութիւն կը գործէ՝ ընդունելի է Նմա , Դործ . Ժ . 54 . 55 :

Առարկութիւն 11 . — Բայց առանձնաւորհութիւն մանկանց հաւատացելոց նուազ է; Աւետարանական տնտեսութեան տակ, բան որչափ էր օրինաց ներքեւ :

Կը պատասխանեմ . — Առանձնաշնորհութիւն բառով ի՞նչ կ'իմանաս : Օրինաց ներքեւ դտնուիլն առանձնաշնորհութիւնն էր : Մեծագոյն եւս առանձնաշնորհութիւնն չլսել Աւետարանը : Կամ առանձնաշնորհութիւնն լսելով՝ Առաքեալէն յսցտնուած խոստանեմը կ'իմանաս, եթէ այսպէս է, յիշէ Հռով . Թ . 8 . Աչքէ անոնք որ են մարմնոյ որդիք որդիք են Աստուծոյ : Կամ կը խորհիս թէ մեծ առանձնաշնորհութիւնն էր մասնակցիլ Թլիատութեան տեսանելի արարողութեան, եւ մտնել անով ծիսական օրինաց տակ : Միթէ առանձնաշնորհութիւնն է այն զոր Առաքեալն կը կոչէ լուծ, զոր ոչ մեր հարերը եւ ոչ

մենք կրցանք վերցունել . առանձնաշնորհութիւն
բառով զայս կը հասկնաս :

Առարկութիւն 12. — Բայց սերունդը ուխտին
մէջ էր . Ասուած ուխտ ըրաւ Արքահամու եւ անոր
սերնդեան նես :

Կը պատասխանեմ . — Ի՞նչ կ'իմանաս Ուխտ բա-
ռով : Մյն ուխտը կուզես ըսել զոր ըրաւ Աստուած
Սինայի վերայ , կամ գործքերու ուխտը : Կը փա-
փաքիս այդչափ դնել զմանկիկ քո այդ ուխտին
ներքեւ : Կամ Շնորհաց Ուխտը ըսել կ'ուզես , յո-
րում կը խոստանայ Աստուած լինել նոցա Հայր :
Եւ կը կարծնու թէ , Եսաւ , Սաւուղ , Յերոբոյամ
Նաբատեան եւ այլ այսպիսիք էին Շնորհաց ուխ-
տին ներքեւ զի թլիատուած էին , կամ կը կարծնու
թէ նոքա կորուախն իրենց բաժինն Շնորհաց ուխ-
տին մէջ , եւ այսպէս ըրին զայն Ուխտ գործոց :
Անել լարիւրինթոսի մը մէջ ես դու : Նկատէ ու-
րեմն թէ՝ Աստուած ըրաւ մի ուխտ Արքահամու եւ
նորա բնական սերնդեան հետ , տալ նոցա զերկիլր
Քանանու , Ծննդ . Ժէ . 7 , 8 : Բայց կենաց եւ Փըր-
կութեան խոստումն տրուեցաւ Արքահամու եւ ա-
նոր Հոգեւոր սերնդեան . Դադ . Գ . 16 . Արդ , խոս-
մունքն Արքահամու եւ նորա սերնդեան եղան , չը-
սեր , եւ սերնդոցդ որպէս թէ շատերու , այլ որպէս
թէ միում , եւ բու սերնդեանդ , որ է Քրիստու : Եթէ
հաւատաս այս համարին , առարկութեան մէջ քիչ
դժուարութիւն կը մնայ , զի խոստման որդիքը կը
նամարուին սերունդ . Հուլ . Թ . 8 : Հաւատացեալք
են Արքահամու սերունդ , եւ ամէն հոգեւոր օրհ-
նութիւն ասոնցն է , թէեւ լինին ասոնք մանուկ

ի չնորհս . իսկ զաւակունք ըստ մարմնոյ , անոնք որ ծնած են ըստ մարմնոյ , չեն կրնար սերունդ համարուիլ :

Առարկութիւն 15. — Բայց մանկունք էին ուխտի ներքեւ , եւ իրաւունք ունեին բլփատուելու :

Կը պատասխանեմ . — Թղփատութիւն սահմանեցաւ առ Արրահամ , առ սերունդ ըստ մարմնոյ , եւ առ ծառայս նորա . Բայց Մկրտութիւն ուր սահմանեցաւ առ բնական սերունդ հաւատացելոյ , պատասխանէ ասոր , կամ թող զիփաստն :

Ուխտիւ մի սահմանեցաւ քահանայութիւն Ղերիի ցեղին եւ անոնց սերնդեան , Յես . ԺԷ . 7 : Թու . ԻԵ . 15 : Կուզե՞ս նոյնպէս սահմանել այժմ զպաշտօնէութիւն Աւետարանական քարոզչաց եւ սոցաբնական սերնդեան : Սակայն պարագայն նոյն է : Բայց զալով Մկրտութեան , ոչ ապաքէն կային բազումք որք եկան ի մկրտութիւն , որոնց ըսաւ Յովհաննէս , եւ մի խորհիմ դուք յանձինս ձեր ըսել , քի մենք ունինք Հայր զՍբրահամ . Մաս . Գ . 9 : Այս չցուցունէր թէ՝ նոցա մարմնաւոր իրաւունք կարուած էր Աւետարանաւ : Հիմա կացինը կը դրուի ծառերուն արմատին , ուստի ամէն ծառ որ բարի պտուղ չբերէր՝ կը կտրուի եւ կը նետուի կրակը : Կրօնն է այժմ անձնական պարտաւորութիւն , եւ ծնունդ ըստ մարմնոյ չունի իշխանութիւն : Եւ դիտէ դարձեալ , Արրահամ Աստուծոյ որոշ հրամանն ունէր ի թղփատութիւն իւր սերնդեան , բայց ուր կայ հրաման կամ խօսք մկրտելոյ զմանկունս :

Առարկութիւն 14. — Բայց Քրիստոս ըսաւ ,

քոյլ տուի մանկացոյդ զալ առ իս, զի այսպիսեաց է արքայուրիւն երկնից :

Կը պատասխանեմ. — Բնաբանն կը յայտնէ պարզապէս, թէ մանկունք չըերուեցան ի մկրտութիւն, այլ որպէս զի անոնց վրայ ձեռք դնէր եւ աղօրք ընթէր, Մատ. Ժթ. 15 : Մարկ. Ժ. 16 : Ոչինչըսուածէ հոս Մկրտութեան վրայ : Եւ ոչ իսկ նշմարելի է հոս հետք Մկրտութեան : Այս, յառաջ եւս երթալով կ'ըսենք, հաւասարի եմք թէ չմկրտեց զնոսա, զի Յիսուս ինք չէր մկրտէր, այլ աւակերտ իւր :

Առարկութիւն 15. — Քայց ըսուած է, խոսումը ձեզ է եւ ձեր որդւոց, Գործ. Բ. 59:

Կը պատասխանեմ. — Արդարութիւն ըրէ անձինդ կարդալով բնաբանին յարկից մասերն եւ պիտի տեսնես թէ՝ ըսուածէ . Գործ. Բ. 17. Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս պիտի քափեմ ամեն մարմնոյ վրայ, եւ որդիի ձեր եւ դսերք ձեր պիտի մարզարէանան, եւ երիտասարդք ձեր տեսիլներ պիտի տեսնեն. համար 58, 59. Ապաշխարեցէք, եւ ձենէ իւրաքանչիւր ոք քող մըկրտուի յանուն Յիսուսի Քրիստոսի... եւ պիտի լնդունիք Հոգւոյն սրբոյ պարզեւը (17 երորդ համարին մէջ յիշուած պարզեւն) : Քանզի խոստումը (վերոյիշեալ Հոգւոյն Սրբոյ հրաշալի պարզեւին խոստառումը) ձեզ է եւ ձեր որդւոց, եւ ամենուն որ նեռու են, զորս մեր Տէր Աստուածը պիտի կոչէ : Յայտնի է ասկէ թէ խոստումն է անոնց որ կը կոչուին, թէ քու որդիքը լինին եւ թէ անոնք որ հեռուեն : Եւ թէ այս խոստումն է այն կոչեալներուն որ ընդունակ են մարզարէանալ եւ տեսիլներ տեսնելու,

այսինքն չափահաս անձանց՝ թէ քու որդիքդ լինին
եւ թէ անոնք որ հեռու են :

Եւ դարձեալ՝ հոս յիշուած խոստումն է Հոգւոյն
Սրբոյ պարզեւին խոստումը : Եթէ այս խոստումն է
որդւոց որ չեն կոչեալ, այսինքն՝ անընդունակ են
հաւատոյ, ուրեմն կամխոստումը կը վրիսի, եւ կամ
հաւատացելոց բոլոր որդիք հաղորդ կը լինին այս
փառաւոր պարդեւին : Սակայն ամէնօրեայ վոր-
ձառութիւնը այս վերջին ենդադրութեան հակա-
ռակը կը ցուցնէ, զի բազումք յորդւոց հաւատացելոց
մարմնաւոր են, եւ այդ խոստում կը կատարուի
միայն անոնց վերայ որք կը կոչուին Աստուծմէ :

Առարկութիւն 16. — Քայց մկրտուած եմ ման-
կուրեան ատենս, ուրեմն ինչու կը կարօսիմ Մըկր-
տուրեան :

Կը պատասխանեմ. — Զուր սրսկեալ յե-
րեսս չէ Մկրտութիւն, այլ ընկլմումն ի ջուր
հանդերձ ազատ հաւանութեամբ եւ հպատա-
կութեամբ առ Քրիստոս համաձայն իւր կա-
նոնաց, այս է ահա որ կը կազմէ զՄկրտութիւն :
Արդ երբ մանուկ էիր, չտուիր հաւանութիւն,
լսելով միայն գիտես թէ մկրտեալ ես . չես գիտեր
ժամանակը յորում մկրտուեցար . չունէիր հաւատք
դործոյն մէջ, արդարեւ դործն չէր քոյդ : Ըստ
պատուիրանին Քրիստոսի դու չես մկրտուած :

Նկատէ թէ ինչ թերութիւններ կան քո ման-
կամմկրտութեան մէջ : Նախ չկայր պատուէր մկր-
տել զքեզ ի մանկութեան : Երկրորդ՝ չէիր դու
յարմար ենթակայ, զի պարտ էր քեզ նախ հաւա-
տալ եւ ապա մկրտուիլ : Երրորդ՝ եթէ սրսկմամբ

կատարուած է այդ արարողութիւն քու վերայ, դու
չես թաղուած մկրտութեամբ, որալէս թաղուեցաւ
Քրիստոս եւ հրամայեց հաւատացելոց թաղուիլ:
Արդ, Մկրտութիւն կուզես կոչել զայն որ սոսկ
աւանդութիւն է՝ ընկալեալ ի նախահարց քոց,
մինչ Քրիստոս, թափեց արիւն իւր պատուական
փրկել զմեզ մեր հայրենատուր ունայն աւանդու-
թիւններէ:

Առարկութիւն 17. — Բայց կան անձինք որ չա-
փազանց կարեւորութիւն կուտան Մկրտութեան, որ
կը խորեցնեն մեզ այդ արարողութենէ:

Կը պատասխանեմ. — Ո՞վ առաւել կարեւորու-
թիւն առւած է Մկրտութեան քան Քրիստոս՝ որ
ըստ. Ով որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի:
Ո՞չ առաքէն մեր պարտքն է մրցիլ այն հաւատոյն
համար որ անզամ մը աւանդուեցաւ Սուրբերուն:
Նոքա միայն կ'ընծայեն չափազանց կարեւորութիւն
Մկրտութեան, որք կը կարծեն թէ մանկունք վե-
րստին կը ծնին անով կամ առանց անոր տարակու-
սելի կը լինի փրկութիւն մանկանց, բայց ոչ անոնք
որ կը դնեն զայն այն սկատշաճ դրից մէջ ուր սահ-
մանածէ Վարդապետ նոցա:

Առարկութիւն 18. — Բայց սուրբ են որդին հա-
ւատացելոց, ուստի եւ արծան են մկրտուիլ:

Կը պատասխանեմ. — Որպէս ըսուած է թէ
որդիք սուրբ են, նոյնպէս եւ ըսուած է թէ անհա-
հաւատ այրն սուրբ է կամ սրբուած հաւատացեալ
կանամբ: Այս սրբութիւն գլխովին ամուսնութեան
կը վերաբերի, զի առաքեալն Ա. կորն. է. 14 ի մէջ
ամուսնութեան վրայ խօսելով՝ հրահանդ կու տայ

թէ անոնք որ հաւատացին պարտին բնակիլ անհաւատ արանց հետ, թէ պարտին թողուլ զնոսա, Ա. Կորն. է. 15. Եթէ օրինաւոր ամուսնութենէ սերեալ մանկանց օրինական սրբութիւնն փաստ բերուի Մանկամկրտութեան, պիտի ապացուցուի ատով նաեւ թէ անհաւատ արք եւ կանայք պարտին մկրտուիլ ի պատճառս իրենց հաւատացեալ ամուսիններու, բան մը զոր ոչ ոք կ'ընդունի. Դարձեալ ըսուած է, Զաք. Ճ. Վ. 20, Ա. Օր ձիերուն սանձի զարդերուն վրայ Սրբուրիւն Տեառն պիտի ըլլայ. ու Տէրոզը տան մէջ կարսաները՝ սեղանին առջեւի կոներուն պէս պիտի ըլլան. Արդ՝ կը կարծնս թէ այս համարէն կարէ փաստ հանուիլ զանգակաց Մկրտութեան, որպէս կ'ընեն Պապականք. Անշուշտ ո՛չ, կայ սուրբ Հինել ի պէտս հաւատացելոց, բանզի ամեն բան կը սրբուի Աստուծոյ խօսքովը եւ աղօրիւք, Ա. Տիմ. Դ. 4, 5, եւ Ամեն բան մասուր է մահուրներուն, Տիմ. Ա. 15. — այսինքն անոնց գործածութեան. Բայց եթէ կը կարծես թէ հաւատացելոց որդիք ընդաբոյս սրբութիւն ունին, քո փորձառութիւն չ'հաստատեր զհակառակն. Զե՞ս տեսներ որ երբեմն բարի մարդիկ կ'ունենան ամրիշտ որդիք, եւ որ չար մարդիկ կ'ունենան սուրբ որդիք. Ուստի այն բնաբանը սա նշանակութիւնը ունի, թէ արք եւ կանայք սուրբ են իրենց օրինաւոր կոչման համար, եւ անոնց որդիք չեն ծնիր ի պղծութեան :

Առարկութիւն 19. — Երբ իսկզբան թվաթուրիւնը հաստատուեցաւ նախ չափահաս անձինք բըլփատուեցան, բայց յետոյ մամկունք եւս թվաթուե-

ցան. այսպէս եւ Աւետարանին Տնտեսութեան ներքեւ երբ Մկրտութիւնն հաստատուեցաւ, իսկզբան արք եւ կանայք մկրտուեցան, եւ յետոյ, ըստ օրինակի թլփառութեան մանկունք եւս մկրտուեցան.

Կը պատասխանեմ. — **Այդպէս չէ, զի իսկզբան երբ Ասառուած հրամայեց զթլփառութիւն, հրամայեց որ այն մատակարարուի մանկանց.** Ծն. Ժէ. 10. ձեզմէ ամեն արուն թլփառուի: Բայց երբ Քրիստոս հրամայեց զՄկրտութիւն, հրամայեց որ մարդիկ նախ աշակերտուինն, եւ հաւատան եւ ապա մկրտուին, բայց ոչ երբէք տուաւ հրաման մկրտել զմանկունս: Նկատէ նաեւ թէ՝ ունիմք զկեանս եւ զգործս Առաքելոց եւ նախնական Եկեղեցեաց, եւ անոնց մէջ ոչ մի մանուկ կը դտնեմք մկրտուած: Պօղոս դարձէ Եկաւ բաւական ժամանակ վերջ համբարձմանն Քըրիստոսի, եւ ինքն կը գրէ չորեհասան ամաց վրայով՝ յորմէ հետէ ինքն եղաւ մարդ Քրիստոսվ, Բ. կորն, ԺԷ. 12. անշուշտ մանկունք ծնան այս չորեքտասան ամաց մէջ, բայց չեմք ընթեռնուր թէ մկրտուեցաւ մին յայնցանէ:

Առարկութիւն 20. — Անոնք որ մկրտուեցան յաւուրս առաքելոց, էին հերանոս:

Կը պատասխանեմ. — Հեթանո՞ս էր Տէր Յիսուս. Մկրտուեցաւ նա: Զէ՞ր ներքինին մի ճշմարիտ երկրպագու Աստուծոյ. Զմկրտուեցաւ նա երբ դաւանեցաւ իւր հաւատքը: Կոռնելիո՞ որոյ աղօթք եւ ողորմութիւնք ելին առ Աստուած ի յիշատակ, հեթանո՞ս էր. ոչ: Ոչ ապաքէն Մանկամկրտականք կը մկրտեն մանուկներ որ հոգեւորապէս հեթանոս են: Մեք բնուրեալք բարկութեան որդիք եմք. Նփես.

Բ. 5: Մանուկ մկրտողներն են ջատադով մկրտութեան հեթանոսաց, իսկ մեք եմք ջատադով Մը-իրտութեան Հաւատացելոց:

Առարկութուն 21. — Բայց Պօղոս կ'ըսէ. Ա. Կոր. Ա. 17. Քրիսոս չղրկեց զիս մկրտել. այլ աւետարաննել.

Կը պատասխանեմ. — Դիցուք թէ այդ խօսքը այնպէս կը հասկցուի որպէս դու կը հասկնաս, սակայն եթէ Պօղոս չղրկուեցաւ մկրտել, Դու հրաման ընդունած ես մկրտուիլ, եւ քո Տէր հաւատարապէս կարէ ըսել քեզ, ֆեզի Բնշ. դուն իմ ետեւէս եկ: Բայց Պօղոս մկրտեց, Ա. Կորն. Ա. 14. 16. Նա մկրտեց զկրիոպոս եւ զԴայիոս եւ զտուն Ստեփաննեսի եւ ուրիշներ: Արդ՝ զսր ինչ ըրաւ նա, ըրաւ կամ Աստուածային հրամանաւ եւ կամ յանձնապատանութեամբ: Նա զրկուած էր աւետարաննել, եւ մկրտութիւնն էր մասն Աւետարանչական պաշտօնին իւրոյ: Փիլիպպոս ընտրուած էր սարկաւագ, սակայն մկրտեց զներքինին. Մկրտութիւնը իւր գործոյն մի մասը կը կազմէր, Գործ. Լ: Այսպէս այն որ կոչուած է ի քարոզել, պէտք չունի կոչուելոյ մասնաւորապէս մկրտելու համար, զի Մկրտութիւն է մի մասն քարոզութեան: Մկրտութիւնն է ճշմարիտ Պատուէր Աստուածային, թէեւ հոս ու հոն կրնայ լինել մի Քարոզիչ որ չէ կարող մկրտել զհաւատացեալս բուն իւր ձեռոք: Կրնայ դտնուիլ մէկը մկրտել զինզ, երբ դու վասիաքող ես մկրտուելու:

Առարկութիւն 22. — Բայց Երեք հազար մկրտուեցան մի աւուր մէջ, այս ամենայն որպէս կրնա-

իին ընկղմամբ մկրտուիլ մի աւսւր մէջ : Նոքա կրնա-
յին սրսկուիլ, բայց ոչ մկրտուիլ :

Կը պատասխանեմ . — Նոքա կրնային մկրտուիլ
թաղմամբ , զի կային երկոտասան Առաքեալներ եւ
եօթանասուն Աշակերտներ , Ղուկ . Թ . 1 եւ Ժ . 1 .
այսինքն՝ առնուազն ութսուն երկու անձինք , սոքա
հեշտեաւ կարէին մկրտել մի աւուր մէջ երեք հա-
զար անձ : Թաղմամբ մկրտութիւնն չէ այնպիսի
գժուարին գործ , որպէս ցուցանել կուզեն անոնք
որ չեն հաճիր այդ եղանակին : Անոնք որ սրսկմամբ
կը կատարեն այդ արարողութիւն , կուտան այն-
չափ ժամանակ որչափ որ կրնար բաւական լինէր
ընկղման համար :

ԳԼՈՒԽ Թ.

ՀԱԻԱՏԱՑԵԼՈՑ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆԿԱՆՑ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ
ԲԱՌԴԱՏՈՒԱԾ

1. Հաւատացելոց Մկըր- 1. Մանկամկրտութիւն չու-
տութիւն հրամայեալ է նի այսպիսի նրաման :
ի Տեառնէ : Մատ . Իլ .

19, 20 :

2. Հաւատացելոց Մկըր- 2. Մանկամկրտութիւն չի
տութիւն համաձայն է կրնար յառաջ բերել
օրինակին Քրիստոսի : այսպիսի օրինակ :
Մատ . Գ . 15 , եւլ :

3. Հաւատացելոց Մկըր- 5. Մանկամկրտութիւն չու-

տութիւն ունի բազում նի օրինակ ի Սուրբ
օրինակներ ի Սուրբ Գիրս :

Գիրս : Գործ . Ը . 12 ,
Բ . 57 , 41 , 42 , եւն :

4. Հաւատացելոց Մկըր - 4. Մանկամկրտութիւն ի
տութիւն յԵրկնից է . մարդկանէ է :
Մաս . ԽԱ . 25 :

5. Հաւատացելոց Մկըր -
տութիւն վառաւորա-
պէս կնքեալէ յԱստու-
ծոյ . Մաս . Գ .

6. Ի Մկրտութեան Հա-
ւատացելոց մկրտեալ
անձն ի գործ կը դնէ
իւր հաւատք :

7. Ի Մկրտութեան Հա-
ւատացելոց մկրտեալ
անձն կը կատարէ գործ
հնազանդութեան :

8. Ի Մկրտութեան Հա-
ւատացելոց , գիտէ ան-
ձը թէ երբ մկրտուածէ :

9. Հաւատացեալք կը յի-
շեն թէ երբ մկրտուե-
ցան :

10. Հաւատացեալք թաղ-
ուած են Քրիստոսի հետ
մկրտութեամբ : Հոռվ .
Զ . 4 :

նի օրինակ ի Սուրբ
օրինակներ ի Սուրբ Գիրս :

Գիրս : Գործ . Ը . 12 ,
Բ . 57 , 41 , 42 , եւն :

5. Մանկամկրտութիւն չու-
նի վկայութիւն ի Սուրբ
Գիրս թէ երբէք կնքեալ
է յԱստուծոյ :

6. Խսկ ի Մանկամկրտու-
թեան , մանուկն ի գործ
չդնէր հաւատք :

7. Խսկ ի Մանկամկրտու-
թեան , մանուկն չկա-
տարեր զործ հնազան-
դութեան :

8. Խսկ մանկունք ոչ ինչ
զիտեն իւրեանց մկրտու-
թեան վրայով :

9. Մանկունք չեն յիւեր
իւրեանց մկրտութիւնը :

10. Մանկունք չեն քաղ-
ուած Քրիստոսի հետ հո-
գեւորապէս , եւ նորա որ
սրբուած են , մինչեւ
անզամ չեն քաղուած
ջրոյ մէջ :

11. Ամենայն մկրտեալ հաւատացեալք Շնոր- հաց Ուխտին ներքե են։ 11. Ամենայն մանկունք մկրտեալք չեն Շնորհաց Ուխտին ներքեւ։
12. Ամենայն մկրտեալ հաւատացեալք ունին զթողութիւն մեղաց։ 12. Իսկ ամենայն ման- կունք մկրտեալք չեն ըն-դունիր զբողութիւն մե- դաց։
13. Աստուած խոստա- ցած է թէ՝ ամէն ովոր հաւատայ ու մկրտուի պիտի փրկուի. Մարկ. ԺԶ. 16։ 13. Աստուած խոստացած չէ քէ ամենայն ման- կունք որ կը մկրտուին, պիտի փրկուին։
14. Հաւատացեալք կու- րախանան երբ կը Մը- կրտուին. Գործ. Ը. 59, եւ ԺԶ. 54։ 14. Մանկունք չեն ուրա- խանար, այլ սովորա- բար կուլան երբ կը սրսկուին։
15. Հաւատացելոց Մը- կրտութիւն ունի Աս- տուծոց բացայաց խօս- քը. Մատ. ԽԸ. 19։ 15. Մանկամկրտութիւն նիմնեալ է մարդկային մակաբերութեանց վե- րայ միայն։
16. Բոլոր աշխարհ կա- րէ անհերքելի կերպով հաստատել, թէ հաւա- տացեալք մկրտուեցան յԱռաքելոց. Ա. Կոր. Ա. 14, 16։ 16. Իսկ բոլոր աշխարհի մէջ ոչ ոք կարէ նումար- տապէս հաստատել, քէ մանուկ մը անզամ մը- կրտուեցաւ Առաքելոց մէկէն։
17. Ամէն անոնք որ մա- նուկ կը մկրտեն, կը խոստովանին թէ հա- ւատացեալներ մկր- տուեցան։ 17. Իսկ բոլոր մկրտեալ հաւատացեալք չեն ըն-դունիր քէ մանկունք մկրտուեցան երբէն։

18. Մկրտեալ հաւատաց- 18. Մկրտեալ մանկունք
եալք ըստ օրինի կը ըստ օրինի չեն մաս-
մասնակցին Տէրունա- նակցիր Տէրունական
կան թնթրեաց :

19. Ամենայն մկրտեալ 19. Իսկ ամենայն ման-
հաւատացեալք կեն- կունք մկրտեալք չեն կեն-
դանի քարեր են որ դանի բարեր յարմար
յարմար կուգան Աս- տանն Աստուծոյ :

Բ. 5 :

20. Մկրտեալ հաւատաց- 20. Իսկ անոնք որ մա-
եալք կը չինեն ի վե- նուկ կը մկրտեն, կը
րայ Քրիստոփի բուն ի- կը շինեն ի վերայ հա-
րենց հաւատով :

21. Անոնք որ մկրտուած 21. Իսկ անոնք որ մկր-
են բուն իրենց հաւա- տուած են ուրիշի մը
տով, սլիափի չկորնչին. հաւատենով, զուցէ կոր-
տուին :

22. Մկրտեալ հաւատաց- 22. Իսկ մկրտեալ ման-
եալք դարձի եկած են, կունք դարձի եկած չեն,
եւ սլիափի չանկանին դա- եւ բազումք կ'անկանին
տապարտութեան ներ- դատապարտութեան ներ-
քեւ. Յովլ. Ե. 24 :

23. Մկրտեալ հաւատաց- 23. Իսկ մկրտեալ ման-
եալք չեն բարկութեան կունք դեռ եւս են ընդ
որդիք. Յովլ. Գ. 36 :

25. Իսկ մկրտեալ ման-
կունք դեռ եւս են ընդ
բարկութեամբ. Յովլ. Գ.
36 :

24. Մկրտեալ հաւատաց- 24. Իսկ մկրտեալ ման-
եալք դիտեն թէ Քրիս- կունք չեն զիտեր թէ Քրիս-

տոս պատուական է. տոս պատուական է :

Ա. Պետ. Բ. 7 :

25. Հաւատացեալք կը 25. Իսկ մկրտեալ ման-
սիրեն զՔրիստոս եւ կը կունք չեն սիրեր զՔրիս-
պահեն զսատուիրան տոս եւ չեն պահեր ըզ
նորա. Յով. ԺԴ. 15.
26. Մկրտեալ հաւատաց- 26. Իսկ մանկունք մը-
եալք կ'երկրպագեն կրտեալք չեն զիտեր թէ
Աստուծոյ հոգւով եւ ինչ է երկրպագուրիւն,
ճշմարառութեամբ, զի եւ չեն կարող մատու-
երկրպագուս կը խնդրէ ցանել զայն հոգւով եւ
իրեն. Յով. Դ. 25, 24.
27. Հաւատացելոց Մկրտ- 27. Մանկամկրտուրիւն
տութիւն պարտի տե- պարտի վերջանալ տու-
ւել ցորչափ կը տեւէ տուն, զի չէ նիմնեալ Աս-
Աստուծոյ խօսքը. Մատ.
Ե. 18.
28. Մկրտեալ հաւատաց- 28. Բայց Մանկամկրտա-
եալք կրնան դէմդնել կանք չեն կարող դէմ
Սատանայի որպէս դէմ դնել սատանայի քսելով
դրաւ Քրիստոս, ըսե- գրուած է, Մանկունք
լով, գրուած է, Ա- մկրտուեցան. զի չէ
նոնք հաւատացին եւ գրուած :
- մկրտուեցան :



ԳԼՈՒԽ Ժ.

**ՀԱՏՈՒԱԾՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՅ Ի ՎԵՐԱՅ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱԿԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ**

Մատ. Գ. 15. Ան ատեն Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ առ Յովհաննէս մկրտուիլ անկէ։ Համ. 15. Յիսուս պատասխան տուաւ եւ ըստ անոր, Թողտուր այժմ, քանզի այսպէս կը վայելէ մեզ որ բոլոր արդարութիւնը կատարենք։ Համ. 16. Եւ երբ Յիսուս մկրտեցաւ, իսկոյն դուրս ելաւ ջուրէն։

Մատ. ԻԱ. 25. Յովհաննու մկրտութիւնն ուսմէ էր, յերկնից թէ ի մարդկանէ։ Երէ ըսենք, յերկնից, պիտի ըսէ մեզ թէ Ապա ինչո՞ւ չհաւատացիք անոր։ Պուկ. Ի. 6. Ապա երէ ըսենք. ի մարդկանէ, բոլոր ծողովուրդը պիտի քարկօծէ զմեզ։

Պուկ. Է. 28, 50. Մաքսաւորները երբ լսեցին արդարացուցին զԱսուած, որ Յովհաննու մկրտութեամբ մկրտեցան։ Բայց Փարիսեցիք եւ օրինականի իրենց անձին դէմ Աստուծոյ խորհուրդն անարգեցին, որ անկէ չմկրտուեցան։

Մատ. ԻԸ. 19. Գացէք աշակերտեցէք բոլոր ազգերը, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Մրբոյ։

Գործ. Բ. 58, 41. Ապա շատեցէք եւ ձենէ իւրաքանչիւր ոք բող մկրտուի յանուն Յիսուսի Քրիստոսի։ Եւ անոնք որ ի սրտէ ընկալան անոր խօսերը մկրտուեցան։

Մարկ. ԺԶ. 16. Ո՞վ որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի։

Գործ. Ը. 12. Բայց երբ հաւատացին... կը մը-
կըրտուէին, արք եւ. կանայք.

Գործ. Ը. 56, 57, 58. Եւ ըսաւ ներքինին, Ա-
հա ջուր, ինչ բան կ'արգելու զիս մկրտուելէ: Եւ
Փիլիպպոս ըսաւ անոր, երէ քու բոլոր սրտովդ կը
հաւատաս, հնարաւոր է: Նա պատասխան տուաւ եւ
ըսաւ, Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս է Որդի
Արքուծոյ: Եւ հրամայեց կեցունել կառքը. Եւ եր-
կոմքան իշան ջուրը, Փիլիպպոս եւ Ներքինին, եւ
մկրտեց զնա:

Գործ. Թ. 17, 18. Եւ... Սաւուդ... ելաւ մկրտ-
ուեցաւ:

Յով. Դ. 22. Յետ այսորիկ եկաւ Յիսուս եւ ա-
նոր աւակերտներն Հրէաստանի երկիրը, եւ հոն
կը կենար անոնց հետ, եւ կը մկրտէր:

Յով. Դ. 1. Յիսուս քան զՅովիաննէս աւելի ա-
ւակերտներ կ'ընէր եւ կը մկրտէր:

Գործ. Ժ. 47. 48. Կրնայ մարդ արգելուլ ջուրը
որ չմկրտուին ասոնք, որ զՀոգին Սուրբ եւս ընկա-
լան իբրեւ զմեզ: Եւ հրամայեց որ մկրտուէին Տէրոջը
անուամբ. անատեն աղաչեցին զնա մնալ քանի մը օր:

Գործ. Ժ. 8. Եւ Կրիոպոս ժողովրդապետն իւր
բոլոր տամբ հաւատաց ի Տէր. Եւ Կորնքացիներէն շա-
սեր լսելով հաւատացին, եւ մկրտուեցան:

Հռով. Զ. 4. Անոր հետ քաղուեցանք մկրտու-
թեամբ:

Պաղ. Դ. 27. Դուք ամենքդ որ Քրիստոսի մը-
կըրտուեցաք, զՔրիստոս հազած էք:

Ա. Պետ. Դ. 21. Որ եւ զմեզ այն օրինակին պէս
կ'ապրեցունէ նիմա մկրտութիւնը, (ոչ թէ մէկդի նե-

տելը մարմնոյն աղտը , այլ բարի խղճին վկայութիւնն
առ Աստուած) յարութեամբն Քրիստոսի :

Ա. Կորն . ԺԲ. 15. Մենք ամենքս մկրտուեցանք
մի Հոգւով մի մարմին ըլլալու :

Դործ . ԺԶ. 53, 54. Եւ առաւ զանոնք զիւեր-
ուան նոյն ժամուն եւ լուաց անոնց վէրքերը , եւ
վաղվաղակի մկրտուեցաւ ինք եւ բոլոր իրենները :
Եւ զանոնք իւր տունը տանելով անոնց առջեւ սեղան
դրաւ , եւ բոլոր տամբ ուրախ եղաւ հաւատալով
յԱստուած :

Դուկ . Գ. 21, 22, 23. Եւ Յիսուս եւս մկրտուե-
լով աղօրք կ'ընէր , երկինք բացուեցաւ , եւ Հոգին
Սուրբ մարմնաւոր տեսլեամբ իջաւ անոր վրայ ա-
ղաւնոյ պէս , եւ եկաւ յերկնից ձայն որ կ'ըսէր ,
Դու ես սիրելի Որդիս քեզի հանեցայ : Եւ ինքն Յի-
սուս սկսած էր ըլլալ գրերէ երեսնամեայ :

Յով . Գ. 23. Յովիհաննէս եւս կը մկրտէր յԱյենոն
Սաղիմի մօս , բանզի տաս ջուր կար հոն :

ՊԼՈՒԹ ԺԱ.

ՎԵՐՁԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՇՈՒԹԻՒՆՔ

1. Նկատէ թէ՝ երբ մարդիկ կ'սկսին ամաչել
վասն անօրէնութեանց իւրեանց , յայնժամցուցուե-
լու են նոցա Տէրոջ տան կանոններն ու ձեւերն :
Նզեկ . ԽԴ. 11. Եւ երէ իրենց բոլոր բրածներէն
ամշնան , տան ձեւը եւ կարգաւորութիւնը , եւ անոր

ելքը եւ մուտքը, եւ բոլոր ձեւերը, եւ բոլոր կանոնները, (բոլոր ձեւերը), եւ բոլոր օրէնքներն անոնց զիսցուր, եւ անոնց աշաց առջեւ գրէ, եւ անոր բոլոր կանոնները պահեն եւ զանոնք կատարեն: Խորհուրդը եւ կարգաւորութիւնը Աւետարանական եկեղեցւոյ արժանի են արդարեւ մեր գիտութեանն ու պահպանութեանը: Զե՞ս ուզեր վիճակել եւ սլահել զայնս:

2. Նկատէ թէ՝ երբ Աստուած կուտայ մէկու մը նոր սիրտ, զնա իւր օրինաց եւ պատուէրաց յարմար ընելոյ համար է. Եղեկ. ԺԱ. 19, 20. Եւ անոնց մէկ սիրտ պիտի տամ, եւ անոնց ներսի դին նոր հոգի պիտի դնեմ. եւ անոնց մարմինէն քարեղին սիրտը պիտի հանեմ, եւ անոնց մարմնեղին սիրտ պիտի տամ. որպէս զի իմ օրինացս մէջ քալեն, եւ իմ իրաւունքներս պահեն եւ զանոնք ի զործ դնեն: Ունի՞ս դու նոր սիրտ, եւ կը յապաղե՞ս ի գործ դնել զպատուիրան Տեառն:

3. Նկատէ թէ՝ որչափ վտանգաւոր է դէմ դնել մի Աստուածային պատուիրանի, մինչեւ խսկ փոքրագունին. ընթերցիր Հռով. ԺԳ. 2: Քանիօն աւելի, յորժամ խնդիրն մի Աստուածային հոգեւոր պատուիրանի վերայ է:

4. Նկատէ թէ՝ որպիսի դատաստան միացած է Աստուծոյ սլատուիրանաց փոփոխութեան հետ. Ես. ԻԴ. 1. Ահա Տէրը զերկիր կը պարպէ, եւ կը դատարկացնէ զայն. վասն էր այս դատաստան. համ. 5. Քանզի անոնք... պատուիրանքը փոխեցին: Երբ Քրիստոս կը հրամայէ մարդոց հաւատալ եւ մկրտուիլ. եւ մարդիկ կը մկրտեն մանուկներ որք

չեն հաւասար . դու դատէ , թէ այս է փոխել ըզ
պատուիրանն թէ ոչ :

5. Նկատէ թէ ինչ հասաւ ի վերայ Նադարի ու
Արիուդայ , որդւոց Ահարոնի . Պետ . Ճ . 1 , 2 :
Նոքա մատուցին զոր ինչ չհրամայեց Տէր . Թէեւ
այդ այն ատեն յայտնալէս արգիլուած չէր , բայց
հրամայուած ալ չէր , եւ Տէր դատեց զնոսա , զի
անցին ըստ սահմանն հրամանին : Մանկամլրտու-
թիւն չէ արդելեալ , բայց չհրամայեց զայն Տէր :

6. Նկատէ թէ՝ զոր ինչ ընկալար ի մանկու-
թեան չէր Մկրտութիւն , եւ որովհետեւ չես մկրտ-
ուած , կ'ասլրիս ի զանցառութեան Աւետարանական
մի մեծ պատուիրանի : Հնազանդութիւն պատուի-
րանի պիտի կոչես զայն , որ չէր գործ քո , եւ չու-
նէր զհաւանութիւն քո , եւ ոչ իսկ զգիտութիւն
քո , չես կարող յիշել թէ երբ կատարուեցաւ այն
եւ յորում չունէիր հաւատք : Մկրտութիւն պիտի
անուանես զայն որ չկատարուեցաւ քո յօժարակամ
հնազանդութեամբ , այլ կատարուեցաւ կամօք ծը-
նողացդ : Արդ՝ եթէ չես մկրտուած , պիտի չշար-
ժի՞ս ըսել ընդ Դաւթի , «Քու վկայութիւններդ պիտի
պահինմ .»

7. Նկատէ թէ Պատուիրանք եւ Խորհուրդք
պարտին մնալ որպէս եւ աւանդուեցան . Ա . Կորն .
ԺԱ . 2 : Բայց Մկրտութիւն աւանդուեցաւ հաւա-
տացելոց , եւ ոչ մանկանց : Աստուած աւան-
դեց անտարակոյս մանկանց զԹլիատութիւն ,
բայց երբէք չ'աւանդեց մանկանց զՄկրտութիւն ,
Ո՞վ կրնայ յանդգնիլ ուրեմն այլայլել զՊատուիրանս
եւ զԽորհուրդս Տեառն :

8. Նկատէ թէ՛ բազումք , ապաւինելով մկրտութեան որ մատակարարուեցաւ նոցա ի մանկութեան չ'են մկրտեալ իրրեւ հաւատացեալք , սակայն չ'են մկրտեր սոքա զմանկունս իւրեանց , որպէս թէ Մանկամկրտութիւնն տարակուսելի բան մը լինէր : Կը հարցանեմ այսպիսեաց , ի՞նչպէս կրնաք համարիլ թէ՛ բաւական է ձեր մկրտութիւն որ մատակարարուեցաւ ձեզի ի մանկութեան , սակայն բաւական չէ այն ձեր զաւաւակաց : Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ Մանկամկրտութիւնը տարակուսելի լինի ձեր զաւակաց համար , սակայն անտարակուսելի ձեր անձանց : Այսպիսի անձինք չ'են հաւատարիմ լուսոյն զոր ընդունած են :

9. Նկատէ թէ՛ ի վեր քան զամենայն տարակոյս հաւատացեալք մկրտուեցան , Գործ . Ը . 12 : Մանկամկրտութիւն (առ առաւելն) խնդիր մի է տարակուսական : Յաճախ վիճարանութեան ներքեւ ձգուածէ Մանկամկրտութիւն : Իսկ Մկրտութիւն Հաւատացելոց յայտնուած է ի Սուրբ Գիրս որոշ կերպիւ . Հաւատացին եւ մկրտուեցան : Արդ լաւագոյն չէ գնալ զճանապարհ աներկրայելի քան զերկրայականն :

10. Նկատէ թէ՛ Հաւատացելոց Մկրտութեան բազմաթիւ օրինակներ կան , բայց չիք մի յստակ կամ աներկրայելի օրինակ Մանկամկրտութեան :

11. Նկատէ թէ՛ որպէս ծննդեան իրաւունք կ'արտօնէր զոք ի Թվիատութիւն , նոյնպէս եւ ծննդեան իրաւունք կ'արտօնէր զոք ի քահանայութիւն : Դու կուզես այժմ առանց մի Աստուածային խօսքի հաստատել զլլիկրտութիւն սերնդեան հաւատացելոց ,

Էր ուրեմն չես ուզեր հաստատել զՊաշտօնէութիւն սերնդեան Քարոզչաց : Տարօրինակ տրամաբանութիւն պիտի չլինէր ըսել թէ՝ Աւետարանին տնտեսութեան ներքեւ Քարոզչին սերունդ ունի նուազ առանձնաշնորհութիւն քան զսերունդ Քահանայի ընդ օրինօք , եթէ իւրաքանչիւր պաշտօնէի որդի չ'որոշուի ի Պաշտօնէութիւն : Կը պատասխանե՞ս այսմ թէ պաշտօնեայք չեն քահանայք : Ուրախութեամբ կը հաւանիմք ընդ այդ . զի չեմք ուզեր այնպէս համարուիլ : Սակայն պարտ է յիշել թէ Եկեղեցին որ ի սկզբան հնարեց զՄանկամկրտութիւն , հնարեց նաեւ զԲահանայութիւն ի պաշտօնէութենէ , եւ այսպէս Մանկամկրտութիւն եւ Քահանայութիւն հնարուեցան Եկեղեցւոյ մէջ միեւնոյն սկզբամբ :

12. Նկատէ թէ պարտիմք գրուածէն աւելի բան չխորհել . Ա. կորն . Դ. 6 : Արդ՝ եթէ Մանկամկրտութիւն չ գրուած իրրեւ պատուիրան , մի համարիր լինել այնու պատուիրան :

13. Նկատէ թէ՝ Քրիստոս հաւատարիմէր իւր բոլոր տան մէջ , Եբր . Գ . 5 . 6 : եթէ Նորա Հօր կամքն էր Մկրտութիւն Մանկանց , ինքն հաւատարիմ պիտի լինէր թողուլ մեզ պատուէր նկատմամբ ատոր : Սակայն իւր բոլոր պաշտօնէութեան ժամանակ խօսք մը ըսած չէ բնաւ , եւ ոչ մի տող թողած է երբէք մեզ նկատմամբ Մանկամկրտութեան :

14. Նկատէ թէ՝ Աստուծոյ ծառայն Մովսէս չի-նեց լերան վերայ իրեն ցուցուած օրինակին պէս , Ել . Իւ . 40 . եւ Տէրոջ ծառայք պարտաւոր չեն

ընել այն օրինակին համեմատ զոր ցուցեալ է մեզ
ի Նոր կտակարանին։ Այս է յիշատակեալ օրինակն,
հաւատացին եւ մկրտուեցան։ Գործ. Ը. 42. Զես
ուզեր քալել այս կանոնին համեմատ։

15. Նկատէ, թէ անոնք որ կը մկրտեն զման-
կունս յենլով իրենց մակաբերութեանց առանց մի
յայտնի վկայութեան Սուրբ Գրոց, թոյլ կուտա՞ն
արդեօք Պապականաց եւ այլոց հանել նման հե-
տեւութիւններ ի պաշտպանութիւն իրենց նորա-
ձեւութեանց։ Վասն զի սոքա եւս կը գործածեն
նոյն մակաբերութիւնները ի ներմուծումն իրենց
Սեղանաց, Շուրջառաց, Խնկոյ, եւն։ Նոքա կը բե-
րեն ի վկայութիւն զբան Առաքելոց թէ՝ ամէն բան
ըլլայ վայելչութեամբ։ Վասն որոյ կ'ըսեն թէ ե-
կեղեցական զգեստ են ի վայելչութիւն, ծնրադրել
առաջի պատկերաց փառաւորեալ սրբոց է ի վայել-
չութիւն, այլովքն հանդերձ։ Այն որ կ'երկնչի
ի Տեառնէ, գոհ չլինիր այսպիսի մարմնաւոր պատ-
ճառաբանութենէ։

16. Նկատէ թէ՝ յոյժ ճիշդ է Սուրբ Գիրք
ի պատմել զգանազան հանդամանս մկրտեալ ան-
ձանց։ Կարդա Գործ. Ժ. 15, 14, եւ դիտէ թէ
որպէս յիշուած է Ժամանակն, տաքար օր։ Տեղին
զետեղեր քով. Սովորութիւնն, Սովորութիւն ունիչին
աղօրել. Ընկերութիւնն, Կանոյք. Անձին անունն,
Լիդիա. Նորա արուեստն, ծիրանավանառ. նորա
ընակութեան տեղին, Թիւատիր քաղաքէն. Կրօն նո-
րա, Երկիւղած. Գործովութիւն նորա, լսեց Աս-
տուծոյ խօսքը. Տէրը բացաւ նորա սիրով. Գործին
Պօղոսի միջոցաւ, ըսուած խօսք։ Այսպէս նաեւ

ի Դործ. ՓԶ. 27, 28, 29, 50, դիտէ զբազում հանգամանան : Եւ սակայն ոչ ուրեք կաց մի խօսք թէ՝ երբէք մանուկ մը մկրտուեցաւ : Վասն էր այս լուռթիւն, եթէ Աստուծոյ կամքն էր Մանկամկրտութիւն : Ուր լուռ է Սուրբ Գիրք, սլարտիմք լուռ կալ եւ մեք :

17. Նկատէ թէ՝ Մի է օրէնսդիր, որ կարող է փրկել եւ կորուսանել . Յակ. Դ. 12. Մեր դատաւոր Տէրն է, մեր օրէնսդիրը Տէրն է, Ես. ԼԳ. 22: Արդ՝ ուր տուած է Տէրն օրէնք յաղագս Մկրտութեան Մանկանց, կուզե՞ս դու շարունակել զայդ առանց նորա հրամանաց :

18. Նկատէ թէ մանուկ մկրտելն, կնքահայր ու կնքամայր, խաչ ի մկրտութեան, խոսամունք եւ ուխտ վասն մանկան, այս ամենեքին մարդկային հնարիւք ներմուծեալ չքն միեւնոյն ժամանակ, եւ միեւնոյն պատճառներով : Եթէ մին ընդունելի է առանց հրամանի Սուրբ Գրոց, ընդէր ոչ մնացեալքն եւս :

19. Նկատէ թէ՝ ապահով կրնաց լինիլ ընդունիլ մի վարդապետութիւն մակաբերութեամբ որ կը հակառակի մի պարզ պատուիրին Աստուծոյ, Մատ. ԻՈ. 19, առակերտեցէք եւ մկրտեցէք : Անդամ մի զարտուղելով ո դիտէ ուր պիտի հասնի ճանապարհ : Ոմանք ուղիղ ճանապարհէն խոտորելով յանչափա հեռացան :

20. Նկատէ թէ՝ Տէրը պիտի չըսէ՞ մի օր անսնց որք մանուկ մկրտեցին, ով պահանջից ձեզմէ . Ես. Ա. 12:

21. Նկատէ թէ՝ Աւետարանկական Պատուիրա-

նաց եւ Խորհրդոց մին ունի՞ այնչափ վկայութիւն
ի Սուրբ Դիբս որչափ Մկրտութիւն Հաւատացելոց :
Նոյնչափ բան ըստն է Տէրն Տէրունական Ընթ-
րեաց նկատմամբ : Ընդէ՞ր ըսուած է այնչափ Մկրտ-
առութեան նկատմամբ, եթէ գուզնաքեայ է կա-
րեւորութիւնն :

22. Նկատէ թէ՝ մկրտուիլն չէ արդարացունել
զԱստուած : Զէ՞ պատուել զնա հնագանդու-
թեամբ : Նկատէ նաեւ թէ՝ չմկրտուիլն Աստուծոյ
խորհուրդը անարգել չէ : Կուկ. է. 29, 50:

23. Նկատէ թէ՝ անոնք որ կը սկաշտանեն ըզ
Մանկամկրտութիւն, չե՞ն քարոզեր թէ՝ Մկրտու .
թիւնն է նշան վերստին ծննդեան, եւ նկատէ թէ՝
մանկունք մկրտեալք ծնած են արդարեւ վերստին :

24. Նկատէ թէ՝ անոնք որ յարգած չեն Աս-
տուծոյ բոլոր Պատուիրանները եւ Խորհուրդները
պիտի չամաչե՞ն յաւուր միում. Սաղ. ՃՓԹ. 6 : Կու-
զե՞ս վերջապէս ամօթոյ մէջ իյնալ նկատմամբ այս
խնդրոյն :

25. Նկատէ թէ՝ Աբրահամ համարձակեցաւ
թվիատել զորդի իւր առանց հրամանի Աստուծոյ,
ուրեմն զիա՞րդ կըյանդդնիս մկրտել մի մանուկ ա-
ռանց հրամանի Տեառն :


26. Նկատէ թէ՝ պարտաւոր չեմք հոդ տանիլ
Պատուիրանաց եւ Խորհրդոց սրբութեանը, եւ թէ՝
այն Պատուիրաններ եւ Խորհուրդներ որ Սուրբ Գրոց
մէջ յայտնի կանոն ունին, չե՞ն ամենէն մաքուր-
ներն :

27. Նկատէ թէ՝ անոնք եւ միայն անոնք պիտի
լսեն բարւոք բրիր. ի գալստեան Քրիստոսի, որք

ըրին զոր ինչ հրամայած էր նա, եւ որպէս հրա-
մայեալն էր: Պիտի ըսէ՞ Քրիստոս քարւոք ըրիր այն
գործոց նկատմամբ զորս ինք չհրամայեց երբէք:
Կամ քարւոք ըրիր կրնայ ըսուիլ անոնց որք զանց
ըրին բոլորովին զՊատուիրան նորա:

Արդ՝ կը խնդրեմ մեզմէ: որ զգութեամբ ուշադրու-
թեան առնես ինչ որ ըսուեցաւ այս խնդրոյն վրայով.
Եւ նւմարտութեան փառաւոր Աստուածն տայ իւր
Հոգին նւմարտութեան, որ առաջնորդէ զեզ ամեն
նւմարտութեան, կանգնէ: զեզ եւ տայ մեզ ժառան-
գութիւն իմիջի սրբոց: Եւ ինչպէս որ գրուեցան
ասոնք անկեղծութեամբ, անկեղծ սիրով որ առ
Աստուած եւ առ անձն քո, նոյնպէս ալ Աստուած
եւ Հայր Յիսուսի Քրիստոսի սրբէ զեզ բոլորովին,
զմարմին զօւնչ եւ զիոզի քո, եւ տայ մեզ սիրս ի
մենել զՍուրբ Գիրս թէ այս բաներն ասանկ են:





ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՄԿՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԻՍԻՈՆԱՐԱՑ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Պատ. Մարտիրոս Սիրականեան.

Արապլիւ .

Պատ. Ա. Յովհաննես Մելքոնեան.

Կարիլի .

Պատ. Կարապետ Դ. Գարդիկեան .

Կ . Պողիս :

Առ մեզ ուզգեալ նամակներն պէտք է ուզգել նետեւեալ հասցեով

Պատ. Յովհաննես Մ. Հայկունի,

Անդ դիտկան թղթատարատունն Կողման

Կ . Պողիս .

Պատ. Հայկունի կը բարողէ ամէն կիրակի կէս օրէն երկր ժամ
առաջ (ժամը 4 ½ ըստ Թրքաց) Հայերէն, իւ կէս օրէն երկու
ժամ վերջը Տաճկերէն, ի 24 թիւ տան, Զէշմէ Փողոց, Ասրա
իչի, Կէտիկ լիաշաւ .

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԾԱԽԵՒՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ

Թէ Մկրտութիւնը ինչ դիրք ունի Քրիստոնեական
եկեղեցւոյ մէջ

զին 40 փուլու

Վամքրիզ, Եսիաս Վամքրիզին Քիլիսէի

Մէսինիյէտ քուքտուղու մէվզի

զին 40 փուլու

Սոյն զուծոյն յունարէն, գրով Տաճկերէնը .


զին 40 փուլու

Թէ յնչու նամաւ Մկրտական կը մերժեն
զՄանկամկրտութիւն

զին 2 դահ.

Մկրտութիւն ըստ Ասուածային Բանին

զին 2 ½ դահ.



70

hu

q

-5n3

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034529

A 1
900